

"Droschak"

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse :

Rédaction du "Droschak"

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱԶԵՆԱԳՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1898-1899

I

Հայի համար վաղուց է նոր Ցարի չկայ. թա-
կանները՝ իրար յաջորդելով՝ վաղուց է, որ նրա հա-
մար բերում են միայն հալածանք, կոտորած, արիւն-ա-
րտասուք...

Զմեաց աշխարհիս երեսին ոչ մի տեսակ բարոյական
կսկիծ, ոչ մի տեսակ մարդկային դժբախտութիւն, որ
չտեսներ հայը. մահու և աւերման սև քողը տարեց-
տարի պատեց ամբողջ Հայաստանը, չթողնելով և ոչ
մի անկիւն, որը ամայացրած ու պղծւած չլինէր...

Գժաւար է ասել, թէ ուր կարող էր հասնել այդ-
պիսի պայմաններում հասարակական լքումը մեր մէջ
եթէ նոյն այդ տարիները միաժամանակ մեզ չթողնէին
և մի անգին ժառանգութիւն — միւսնոյն անսահման հա-
ւատը, միւսնոյն անվրդով յոյսը դէպի ապագան...

Այդպէս վերջացաւ և 1898 թւականը, որի մի քա-
նի բնորոշ գծերը ուզում ենք յիշատակել այստեղ:
Հայկական խաչելութիւնը մահադական Գողգոթայի
վրայ շարունակելով և այդ թիւին, անկարող եղաւ
սակայն որ և է չափով փնասել մեր արդար դատի ան-
պայման կենսունակութեանը: Այժմ. ոչ Ասպուրականի
անցեալ տարւայ սարսափները, ոչ Բաղէշի և Խլաթի
մահաբեր կոտորածները, ոչ քաջարի Սասունի և առիւծ
Վիլիկիայի սովը և ոչ էլ Խարբերդի ու Բալուի գիւղե-
րում տեղի ունեցած անգթութիւնները — չեն նւագե-
ցնում մեր հաւատը դէպի գործը, դէպի յաղթանակը:

Այս ընդհանուր երևոյթը, որը յաջորդաբար մեր
ծանր կուր ընթացքում միշտ պահպանւել և պահ-
պանւում է, ներկայումս մեր յոյսերի գլխաւոր գրա-
ւականը, մեր գործունէութեան զօրեղ խթանն է: Եւ
իրաւ. մի փոքրիկ ծանօթութիւն երկրի գրութեան հետ
— և մարդ չի կարող չսարսափել այն ահագին վիճի
առաջ, որի դիմաց խաղացւում է հայկական անվերջ
դրաման: Երկրի կուլտուրական և ազգագրական պայ-
մանները, սուղթանական ուժով՝ միացած կոտորածների
գիւղական ծրագրի հետ, Եւրոպայի ոճրագործ քաղաքա-
կանութիւնը և նոյնիսկ հայութեան մի ահագին մասի
անարգ անտարբերութիւնը դէպի իր եղբայրների գեր-
մարդկային տանջանքները, — այս բոլորը այնպիսի խո-

շոր պարագաներ են, որոնցից իւրաքանչիւրը՝ նոյն
խսկ առանձին վերցրած՝ կարող էր մահաբեր լինել
մեր դատի համար: Եւ սակայն՝ չնայելով այս իրար
հետ շաղկապած պայմանների սպանիչ ուժին, հայը
գեռ կանգուն է. նրա հայեացքը դեռ չի պղտորւել
այն վիճի առջև, որի ծայրին նա գտնւում է. նրա գի-
տակցութիւնը գեռ պարզ է, նա գեռ յոյս ունի վա-
ղը-միւս օրը մի հսկայական թռիչքով իր յետևը թող-
նել այդ անյատակ, մթին անդունդը... Նա այդ սոս-
կայի անդունդին արդէն անհամար, անհաշիւ զոհեր է
տուել և այսօր՝ աւելի քան երբ և իցէ՝ նա համոզւած
է, որ ազատութեան համար ոչ մի գին թանկ, ոչ մի
զոհ ծանր չի կարող համարւել...

Բայց դիմենք կեանքին:

Ինչպէս յայտնի է, անցեալ տարւայ ընթացքում
մեր զինակիր խմբերից մի քանիսը հանգամանքների
բերմամբ կուր բռնեցին թշնամու հետ: Ո՞վքեր էին
դրանց անդամները. յափշտակող պատանիներ. տեղա-
կան պայմաններին անծանօթ օտարականներ. արհես-
տական գրգռումով առաջնորդող և ժողովրդի տրա-
մադրութեանը անտեղեակ ցնորամիտներ: Ո՞չ երբեք:
Նրանք բոլորն էլ բնիկ թիւրքիացի էին, մեծ մասով
եփուն, հասակ առած ու երկրում ընտանիքներ ունե-
ցող գիւղացիներ, որոնք ամենայն գիտակցութեամբ կուր
ճանապարհից դուրս՝ փրկութեան ուրիշ միջոց չէին գտ-
նում հայի համար: Նայեցէք այս համարում տպւած
մեր 9 նահատակ զինակիր ընկերների պատկերներին,
կարգացէք նրանց անուններն ու ծագումը, մտաբերեցէք
այն բարձր յեղափոխական գիտակցութիւնը, որով նը-
րանք զոհեցին պարսկահայ գիւղացու շահերին, — և
մեր վկայութեան ճշդութեանը մասին կասկած չի մնալ
ձեզնում: Միթէ այդ ամէնը ապացոյց չէ, որ թիւրքա-
հայը գեռ հեռու է յուսահատութիւնից և որ նա՝
ընդհակառակը՝ ունի միանգամայն որոշ, միանգամայն
հիմնական պահանջներ...

Այդ բաւական չէ: Յիշեցէք հետևեալ դէպքը այդ
տեսակ խմբերի անակնկալ ընդհարումների պատմու-
թիւնից: Արածանիի ափերին մի խումբ շրջապատւում
է թիւրք զօրքով և քիւրդերով: Նայելով մահաւան աչքե-
րին հերոսի համարձակութեամբ, պատրաստ աւելի շուտ
բաժանւել իր կեանքից, քան հայրենիքի փրկութեան
կուսաններից՝ զենքերից, խումբը մղում է այդտեղ մի

շարք դիւցազնական կռիւներ: Մի քանի օր տեւող այդ կատաղի կռիւների մէջ մեծ կորուստներ կրելով հանդերձ՝ խումբը հակառակ բանակից հարիւրներ է խլում, և խմբի մնացորդը թշնամու շարքերը պատռելով, կրակի և արիւնի միջով շարունակում է իր ճանապարհը՝ հասնելու այնտեղ, ուր անգէն և անպաշտպան ժողովուրդը հեծում է բռնութեան տակ, «զէ՛նք, վէ՛նք» աղաղակելով: Այդպիսի հոգեկան վեհ տրամադրութիւն կարող է ունենալ կուռղ կողմերից միայն նա, որը զգում է, թէ յաղթողը ինքը պիտի լինի...

Իսկ ո՞վ է Սերորը, Աղբւր մականւանւած սօխօրդցի այդ հանրածանօթ գիւղացին, որի առջև սասանում են երկու ամբողջ գաւառներ, որի անունով թնդում են Բաղէշի և Խլաթի լեռներն ու ձորերը... Ո՞վ է այդ Սերորը, որին տարիների ընթացքում մի շարք վալիներ ու քրդական բէկեր չեն կարողանում ձերբակալել, և որը, մէկ այստեղ, մէկ այնտեղ յայտնւելով՝ պատժում է ժողովրդի թշնամիներին կամ ջախջախում է իր դէմ ուղղած զօրքերը և ցրելով նրանց, անհետանում... Դա՛ հայ ժողովրդի բարկութեան սրբազան աղաղակն է, որ արտայայտւել է իր զաւակի հրաշալի պատկերի մէջ: Դա ինքը հայ ժողովուրդն է, որը զգում է իր ուժը և արհամարհում է ամէնասոսկալի պայմանների ծանրութիւնը... Դա արդար բողոքի նոյն մարմնացումն է, ինչ վասպուրականի համար վազգէնն էր — անցեալ տարի իր երկու ընկերների հետ նահատակւած յայտնի վազգէնը...

Թող վատերը շարունակեն շնջալ, որ Սերորները և վազգէնները վնասակար են, որ նրանցով են բացատրւում շատ տեղերի սարսափներ. սակայն ո՞վ ծանօթ է Թրքական ռէժիմին, ո՞վ ունի թէկուզ ամէնաթոյլ գաղափար, թէ ինչպէս են վարգանում առհասարակ ժողովուրդների մէջ ազատասիրական շարժումները — նա գիտէ դէպի ուր ուղղել իր զայրոյթը, նա կը կարողանայ գնահատել այդ արդար զայրոյթը մարմնացնող հերօսներին, ժողովրդի վշտերը մոռացութեան չմատնելու համար ամէն բան զոհողներին, յաղթական կուռի համար այդ ժողովուրդը կազմակերպողներին...

Յեղափոխական գործի կենսունակութիւնն ու ժողովրդականութիւնն արտայայտւեց նաև անցեալ տարի տեղի ունեցած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ընդհանուր ժողովում: Զանազան տեղերից եկած 32 ներկայացուցիչներից և ո՛չ մէկը ժողովում վհատութեան և ոչ մի խօսք չարտասանեց: Դժւար է ենթադրել, որ այդքան հոգու մէջ, որոնցից շատերը տարիների ընթացքում բաժանւել են ժողովրդի հետ թշնամու հարւածների ծանրութիւնը, իսկ միւսները միշտ բաւական մօտ են եղել մեր ողբերգական դատի անօրինակ մանրամասներին, — դժւար է, ասում ենք, ենթադրել, որ այդքան հոգու մէջ գտնէ մէկը չբողոքէր, յանուն ժողովրդի շահերի, կուռի անհրաժեշտութեան կամ կա-

րելիութեան դէմ, եթէ այդ կուռը վնասակար կամ անհնարին լինէր: Բայց արձագանգ տալով իրերի դժւար դրութեանը ու երկչոտներին թողնելով, դառն իրականութիւնը թագցնել իմաստակութիւնների ետև, ժողովը շատ երկար զբաղւեց իրեն հետաքրքրող հարցերով, որպէսզի այդ հարցերն անցնեն սառն և հիմնական քննադատութեան բովից:

Մենք ունենք տեղեկութիւններ, որ հին և նոր «նշանակաւորները» նոյնպէս Ընդհանուր Պատգամաւորական ժողովներ են ունեցել անցեալ 1898 թւին իրենց գործունէութեան եղանակը և կազմակերպական հարցերը որոշելու համար: Համարձակ կարող ենք եզրակացնել ուրեմն՝ որ հայը դեռ հեռու է ուժասպառ լինելուց, քամւելուց. նա ունի ուրեմն իր ինտելիգենտ զաւակների շրջանում ևս որոշ տարր, որը ամենավտանգաւոր ճանապարհի վրայ չի կամենում բաժանւել իր ժողովրդից, չի կամենում թողնել նրան իր ճակատագրին: Զուր հարց է, իհարկէ, թէ այդ կուսակցութիւններից իւրաքանչիւրը որքան է համապատասխանում ներկայի պահանջներին: Ուրախալին այն է, որ այդ կուսակցութիւնների գոյութիւնը հայ ժողովրդի ազատութեան գաղափարի վրայ է հիմնւած: Թող լինի այդ տարրը, թող շատանայ օրէցօր: Հոգ չէ՝ թէ այս կամ այն կուսակցութիւնը այսօր կեղծ կամ սխալ հողի վրայ լինի կանգնած: Հոգ չէ, եթէ նոյնիսկ այդ կուսակցութիւնները շատ դէպքերում իրար աւելի աններողութեամբ են վերաբերում, քան նոյնիսկ տաճիկ կառավարութեան: Այդ ամէնը կը մերկացնէ, կը խորտակէ, կը ջախջախէ ինքը կեանքը, ինքը գործը, և իւրաքանչիւր կուսակցութիւնից անբախտ, նահատակ հայ ժողովուրդը կը վերցնի այն, ինչ համապատասխան է իր կարիքներին...

— Այս մի քանի գծերով իհարկէ, չեն սահմանափակւում ո՛չ այն բնորոշ երևոյթները, որոնք մեր դատի տեսակէտից արժանի են ուշադրութեան, ո՛չ էլ անցեալ տարւայ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործունէութիւնը: Բայց մի քանի կէտերի մասին թողնելով խօսքը միւս անգամին և միւսների մասին այնպիսի մար համարելով խօսել՝ մենք վերջացնում ենք մեր տեսութեան այս մասը, ընդունելով, որ այսօր՝ 1899 թւականի սկզբին՝ հայ ժողովրդի տրամադրութիւնը թըշնամու դիմաց նոյնն է, ինչ վերջին տարիները:

Թէ ինչ կը բերի հայի համար առաջիկայ տարին — այդ, իհարկէ, դժւար է նախատեսել: Եթէ ժամանակի անիւը այնքան անշունչ և անզգայ չլինէր դէպի կենդանի աշխարհը կամ ժամանակակից դիւանագիտութիւնը այնքան անխիղճ չլինէր նոյնիսկ դէպի իր պաշտօնական պարտականութիւնները, — այն ժամանակ, իհարկէ, կարող էինք յուսալ, որ վաղը միւս օրը մի հարւածով վերջ կը տրւէր մեր դժոխալին դրութեան և հայը ցնծութեան թւերի վրայ կը դիմաւորէր հե-

տեւեալ տարին: Բայց ժամանակը անողոր է, մարդկութիւնը՝ անսիրտ... Ամէն տեղ դեռ լսուում է «Մեռի՛ր, եթէ ընդունակ չես կուեղու»։ ամէն տեղ դեռ կենդանի է հինաւուրց Բրէննի դիւաշունչ բացագանչութիւնը «Այ՛, յաղթածներին»։ Այդ գիտէ հայ ժողովուրդը և՛ չկամենալով ոչ մեռնել, ոչ յաղթել, կուում է — կուում է, որովհետեւ «Աստուած ինքը թոյլ է տալիս միայն կուում ձեռք բերել իրաւունքն ու արդարութիւնը», — կուում է, որովհետեւ գալիք տարիները կը բերեն նրա համար միայն այն, ինչ նա կ ու ո վ ու ղ ո ո վ վ ե ր ց ր ա ծ կը լինի:

«ՆՈՐ ՏԱՐԻ»

Դարձեալ մի տարի: Օրերի և ամիսների մի որոշ թիւ կատարեց իր անխուսափելի շրջանը և ծածկեց յաւիտենականութեան մռայլ ծոցի մէջ. 1898 թւականը չկայ այլևս, Նոր Տարի է:

Յոյս և երկիր... ահա՛ թէ ինչ է զգում աշխարհը Նոր տարւայ շէմքի առջև: Սակայն այդ յոյսն ու այդ երկիրը սոսկ սնոտի հաւատալիքների արգասիք չեն:

Ազգերի կեանքի մէջ տարիներ կան, որոնք ասես դադարում են ժամանակի պարզ շրջան լինելուց, որոնք կարծես, խախտելով բնութեան անշեղ օրէնքները, կեանք, շունչ ու հոգի են առնում և խօսում են մահ-կանացուների ականջին մի զարմանալի, մի գերմարդկային լեզուով: Նրանք բաներ են ասում, որոնցից դողում են բռնաւորներն իրենց արիւնոտ գահերի վրայ, որոնցից յոյսի կենդանարար ցնցուղներ են թռչում, լուսաւորելով դարաւոր շղթաների ծանրութեան տակ հեծող ստրկի խաւարամած սիրտն ու միտքը. ցնցում են կապկպած, արիւնոտ, վիրակալած բազուկները գերմարդկային ուժով, շառաչում են շղթաները և նրանց շոխորդ անհնարին սարսափով է համակում մարդախոշոշ բռնաւորի ամբողջ էութիւնը. արիւնոտ, զազիր ոճիրների զոհերը ցցում են դահիճ բռնաւորի առաջ սղմած բռունցքներով, բանտերի խաւարից դուրս սողացող, կախաղանների բարձրութիւնից հրացայտ աչքերով դիտող հերօսանհատակների կարմիր ուրա-կանները խօսում են մօտիկ անցեալից ու բռնաւորի վարհուրած աչքերի առաջ գծագրում են իր սև գործերի ահեղ դատաստանն ապապայում...:

Եւ այսպէս Նոր Տարու շէմքում երկիրը բռնաւորի բաժինն է, իսկ Յոյսը՝ սրբազան, հզօր, մեծագործ Յոյսը՝ մաշած շղթաներով պրկւած գերիների բաժինն է:

Նոր Տարի...

Ի՞նչ ասել է Նոր Տարի այն վեհ, հզօր գաղափարի համար, որի անունն է Ազատութեան Ոգի, որի համար չկայ ժամանակ, չկայ տարածութիւն, որը դուրս գալով խղճուկ գիւղերից, ծխաշունչ աւերակներից, մրոտ, գետնափոր խրճիթներից, նահատակների սրբազան շիրիմներից, շանթ ու կայծակով պսակած իր հպարտ ճակատը, անցնում է տանջանքների տակ հեծող ցաւերի աշխարհի վրայից, ուղղում է ծուռած մէջքերը, բարձրացնում կախած գլուխները, ոտքի է հանում ծունկ չօքածներին և պատմական անողոր օրէնքներից կուած իր հսկայական մուրճով հարւածներ է իջեցնում դարերի խարխուլ

մէջքին և ցնցում ժողովուրդների սիրտը Ազատութեան կոչի որոտով: Այդ սրբազան ոգին Նոր Տարու շէմքի առաջ՝ անյայտութեան ու անորոշութեան դիմաց՝ չցիտէ ինչ ասել է երկիրը, տարակուսանք. նա ծաղրում է, հեգնում է թուլասրտութեան ամէն մի նշան. նա ծաղրում է նոյն իսկ անորոշ, աղօտ յոյսը, որովհետեւ նա ինքը աւելի է քան թէ յոյսը, նա խորին համոզմունք է՝ յաւիտենական արդարութեան, ճշմարտութեան, մարդկային ամենաւերական իրաւունքների վրայ հաստատած համոզմունք, որ ազգերի բախտն ունի իր ձեռք-քին: Նոյն ազատասիրական ոգին, որ արդէն բռնկել է դարաւոր ստրկութեան տակ հեծող հայ ժողովրդի սրտում, անտարակոյս, ամենայն յամառութեամբ պիտի մղէ մեզ դէպի մեր վերջնական նպատակը, չնայելով նոյնիսկ անօրինակ խոջճողոտների: Դրան գրաւական կարող է լինել մեր մօտիկ անցեալը: Եւ յիշաւի, մի ակնարկ ձգեցէք հայ յեղափոխական գործունէութեան տարիների ամբողջ շարքի վրայ. դիտեցէք այդ շրջանում վեհութեամբ բարձրացող չքնաղ գլուխները, որոնք երբեք չիմացան, թէ ինչ ասել է կուսակալ դիտեցէք այդ սղմած շղթաները, որոնցով ասես դարերն են խօսում, այդ մերթ մռայլ ու ահաւոր, մերթ ժպտուն, բայց միշտ հրացայտ աչքերը, ուր արտացոլում են կամ հեգնութիւն, կամ անէծք ու սպառնալիք կարմիր սուլութանին. նայեցէք հերօսների այդ նօսրացած շարքերը, որոնք անմիջապէս սղմում լցւում են ու կրկին շարժւում յառաջ, միշտ յառաջ, շարունակ յառաջ, — և դուք կը տեսնէք այդ ոգու սրբանշխարհութիւնը ուժը...:

Երբ երկրորդ վանդակում փակւած գազանի հրամանով Հայաստանի ամենախուլ անկիւններից սկսած մինչև ամենամարդաշատ քաղաքները հարկւր հազարաւոր անմեղ զոհեր իրենց դիակներով ծածկեցին հայրենիքի նւիրական հողը՝ կոյր, եսասէր, անսիրտ աշխարհը և վախկոտները ասացին. «է՛լ չկայ հայկական յեղափոխութիւն, չկայ ազատական ոգի, չկայ նոյնիսկ հայ ազգ, նա թաղեց իր երկրի ծխաշունչ աւերակներում»...:

Սակայն այդ երկչոտ, լալկան հառաչանքները և կասկածները չկարողացան թուլացնել Ազատութեան Ոգին, որ չնայելով թափւած արեան բոլոր ահաւորութեան, շարունակում էր ապրել ամբողջ հայ ժողովրդի ցան ու ցրիւ մասերի մէջ. նահատակ ազգի յեղափոխական մարմնացաւ Պետօների, Բաբկէնների, Գնունինների, Սուրէնների, Արաբօների, Շէրօ-Չաթօների, Վազգէնների, Կարօների, Նախօների սրանչելի անձնաւորութեանց մէջ: Ազատութեան անյագ տենչը, ժողովրդի վրէժխնդրութեան սրբազան ոգին, նրա անսանձ գայլթն էր, որ հրաբուխի պէս դուրս էր ժայթքում իր նւիրական ծոցից այդ քաղերին՝ անբարտաւանացած բռնութեանը յեղափոխական մեծ ոգուն վայել եղանակով պատասխանելու համար:

Բռնաւորի ուխտագրութ շղթաների նենգաւոր խօստումներից հիւսւած մահառիթ օրօրները անկարող եղան հանգիստ քուն բերել խոցւած սրտերին, արիւնով ու վէրքերով պատած մարմինն: Այդ օրօրների նենգաւոր հնչիւնները մեռան թշուառ երկրի արիւնապատ մթնոլորտում, խլացան արդար վրէժխնդրութեան հուժգու ճիչի, ազատութեան մեծագործ որոտի տակ, որոնց արձագանքները մերթ Խանասորի բարձունքի վրայ, մերթ Վանայ շրջակայքում, մերթ Արածանի ափերին

և նոյնիսկ բռնաւորի պայտի պատերի տակ կրկնեցին աշխարհին այն ճշմարտութիւնը, թէ դէպի ստրկի կեանքն ու շղթաները զզւանք, ատելութիւն տաճող, իր ազատութեան հպարտ գիտակցութեամբ լցւած մի ազգ չի կարող մեռնել, նա չպէտք է մեռնի: Լքւած սրտերը վերակենդանացան, մոայլած ճակատները պարզեցին, մարած աչքերը փայլեցին յուսոյ կրակով և ուղղեցին դէպի յեղափոխական փրկիչ ոգին, որ ապրում է մահերի վրայ, ժպտում է արեան երեսին և հրաշքներ է գործում...

Ազատութեան համար անողորմ կռիւը շարունակւում է և պիտի շարունակւի. հեռու զինադուռ հեռու խաղաղութիւն: Դահճի կարմիր ձեռքերի վրայ տակաւին չի սառել անմեղների արիւնը, պատմական այս վայրկեանում թուլութիւնը ոճրագործութիւն է, հաշտութեան գաղափարը՝ զզւելի հեգնութիւն մարդկային ամէնաւերական զգացմունքների, ծանր անարգանք ուղղած մի ամբողջ ազգի ազատական ոգուն, նրա ամէնաւերական գաղափարներին: Բռնակալի և ստրկի միջև, անմեղ զոհի և դահճի միջև սրի և արեան յարաբերութիւնից դուրս ուրիշը լինել չի կարող, մինչև որ արդարն իր իրաւունքներն ստանայ, մինչև որ վերաւորւած, ցեխի մէջ ձգւած մարդկային արժանիքը կարողանայ սրբել իր վրայից ստրկութեան սև արատը, մինչև որ լուծւի հայ մայրերի և մանուկների արեան, հայ կոյսերի պատւի անարգանքի վրէժը, մինչև որ նահատակ հերոսների նւիրական ոսկորները հանգիստ առնեն հողի տակ և հայ ժողովուրդն իր հայրենի հողում իր աշխատանքի, իր հացի, իր պատւի, իր կեանքի տէրը դառնայ: Ահա այն նպատակը, որին դիմում է հայ յեղափոխութիւնը իր բոլոր ուժերը լարած, և միայն այդ նպատակի իրագործումը կարող է վախճան տալ կռիւին...

Արեան ծովի միջից լողալով անցանք. Կեծ Գործը մեծ զոհեր է պահանջում, հեռու մեզանից վհատութիւնը, ստրկութեան շղթաները փշոզող բոլոր ազգերի գլխով անցել է նոյն ճակատագրական անհրաժեշտութիւնը, մենք առաջինը չենք և ոչ էլ վերջինը: Արիւնարբու սուլթանն էլ այդ զգում է, և իր բացած արիւնալից անդունդի վրայից հաշտութեան դիմումներ է անում հայ Յեղափոխական Վազմակերպութեան...

Սըմնք մեր շարքերը և դիմենք դէպի նոր Տարին՝ ոչ այս, որի անունն է 99 թւական, որը յեղափոխութեան համար ժամանակի մի պարզ շրջան է միայն, այլ դէպի այն ՏԱՐԻՆ, որ մեր փրկութիւնը, մեր կեանքի վերածնութիւնն է բերելու...

* * *

Ազիզ մերիկ, քեզի թողի,
Դարդ ունէի, դուրս ընկայ,
Սուրբ վաթանիս ժողովրդի
Ձեռը կանչեց, դուրս ընկայ:

Դու՛ման սարեր, դարդլու սրտեր,
Դարդ ու դու՛ման մեր վաթան,
Ա՛խ, գլուխս քու ուղուրին
Ա՛խ, մեր անձն, մեր-վաթան...

Է՛յ, Սիս-Մասիս, ձեզի մեռնիմ,
Իմ Սիս-Մասիս, ջան տղերք.
Դուք տասի չափ — հազարի չափ,
Ձեզի մեռնիմ, ջան տղերք:

Առուծի պէս առուն կուգայ
Բաշը տւած քարերին,
Առուծի պէս, հայ-ախպրտանք,
Ա՛հ, վրայ տանք դու՛շմունին:

Մէկ սիրտ դառնանք, բիւր սուր դառնանք,
Ջարդենք, փշոնք դու՛շմունին.
Ջան, տղերք ջան, զարկենք-զարկւինք,
Մէր-վաթանի ուղուրին...

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

ՄԱՀԱՄԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ուր Պօլիս և ուր Պարսկաստանի Մահլամ գիւղը, բայց տաճկի բռնակալութիւնը այստեղ էլ կարողացաւ հասցնել իր արիւնոտ թաթը, կարողացաւ կատարել մի անլուր, մի քստմեղի ոճիր — 9 անձնատուր եղած հայեր խողխողած են նրա չարամիտ թելադրութեամբ չեզոք հողի վրայ:


Նայեցէք պատկերին — 8 հայ գլուխներ՝ որպէս մի նոր նողկալի մարտահրաւէր՝ ձգւած են հայ ժողովրդի երեսին:

«Արիւնոտ դա՛ս» մոմաացին անշուշտ բռնաւորի արբանեակները ոճրագործութեան ժամին: Այո՛, գազաններ, կարգում ենք, կարգում այդ դարիւնոտ դասը՝ մեր թանկագին ընկերների նահատակ դէմքերի վրայ. չէ՞ որ մահը յաւիտեան դրոշմում է իր զոհի շղթանքներին նրա վերջին մրմունջները, աղօթքն ու անէծքը, աչքերի մէջ՝ վերջին ցուքը, ճակտի կնճիռներում՝ վերջին մտքերը: «Արիւնոտ դա՛ս...» մոնչացիք դուք, իսկ ի՛նչ է ասում մեզ այս դէմքը, այ՛ այս, որի շուրջն ասես պսակ են կազմել այս արիւնշաղախ ճակատները. նայեցէ՛ք, մեռած է նա թէ քնած. ձեր դաւաճան ձեռքի գնդակը մեխած է ճակատին, բայց շղթանքի վրայ դեռ խաղում է ժպիտը՝ պաղ, սարսեցուցիչ ժպիտ, որ կանգ է առել ժամանակի մէջ անանց, անվերջ. դա միևնոյն ժպիտն է, որ հարիւրաւոր տարիներ խարոյկների բոցերի տխուր ցուրքերում փայլել է վեհ արհամարհանքով՝ բռնութիւնից վե՛ր, վե՛ր, իսկ երբ նահատակի մարմինը մոխիր է դարձել, այդ սպանիչ, այդ ցուրտ ժպիտը զայրացած երկնքում փոխել է վրիժառու շանթի՝ ճայթելով անիրաւութեան, անարդարութեան գլխին:

Ահա՛ միւսը, նրանից աջ, աչքերը չռած ու սպառնալից, շղթանքները բաց, մազերը խռիւ. ի՛նչ է այդ, սարսափի պատկեր... օ՛, ո՛չ, դա սարսափ չէ, — մահը ինքը երկիւղով է մօտեցել նրան, — դա մարմնացած զայրոյթ է իր իսկ անձի դէմ, որ չի կարողանում հրդեհ դառնալ, վառել միանգամից իր հայրենակիցների սըրտերը հսկայական խարոյկով ու նրա բոցերով մոխիր դարձնել ամօթալից բռնութիւնը:

Ս Ա Լ Մ Ա Ս Տ Ի Մ Ա Հ Լ Ա Մ Գ Ի Ի Ղ Ի Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ն Ե Ր Ը

14/26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1898



ԽԱՀԱՏՈՒՐ ԵՄՐՈՒԹԻՒՆԵԱՆ, մոկացի

ԵՄՐՈՒԹԻՒՆ, ուլմոցի

ՍՏԵՓԱՆ, խիզանցի

ՀԱՐՈՒՆ, շատախցի

ԳԱՐՐԻԼԷ, ՄՈՒՐԱՏԵԱՆ (ՄՆԶՕ)

ՆԱՀԱԳՆՑ ԵՂԻԱՋԱՐԵԱՆ (ՆԱԽՕ), ԿՁԱՐԵՐ

ԵՄՐՈՒԹԻՒՆ ԽԱՀԱՏՈՒՐԵԱՆ մոկացի

ԳԱՆՈՒՍՏ ԳԱՕՅԵԱՆ

Ահա երկու պատկեր ևս, վարը, նահատակների շարքի բոլորովին վերջում, երկու գեղջուկ գլուխներ սրով և գնդակով խոցւած, երկար տարիներ կռացած արօրի վրայ՝ պատուում էին նրանք մայր երկրի սիրտը իրենց արնխում թշնամիներին կշտացնելու համար, վերջապէս երբ դառնութեան բաժակը լցւեց, ցաւը մսից ոսկորին անցաւ, արօրը թողին, զէնք առան, մաճին սովոր ջլոտ



(Իններորդ նահատակը, որի պատկերը չկայ խմբի մէջ)

ձեռքին խորթ չեկաւ արեան գործիքը՝ քանի որ նա ճանապարհ էր հարթում գէպի սիրած արօրը, գէպի խաղաղ վաստակը։ Ահա պինդ փակւած են նրանց աչքերը, ծնօտներն իրար սղմած այնպէս, որ ասես դեռ լսում է նրանց նզովքը՝ պատիր խոստումներին հաւատալով զէնքը վայր դնող հային։

Խաղաղ են միւս բոլոր գէպերը, ով կարող է ասել, թէ մահու սարսափը մի չնչին հետք ունի այնտեղ, ոչ մի ցաւ, ոչ մի վիշտ, կատարած սրբազան պարտքի, մղած պայքարի արդարութեան գիտակցութիւնն է, որ մեղմութեամբ փայլում է այդ գէպերին, յաւիտենական խաղաղութիւնն է, որ նկատուում է այնտեղ։

Նահատակ ընկերներ, դուք անձնատուր եղաք՝ չկամենալով ձեր դիմադրութեամբ վտանգել Մահլաճի հայ ազգաբնակչութիւնը։ Դուք չգիտէիք, որ այդ գիւղացիներից ոմանք համակիր են եղել ձեր թշնամիներին, և այդ ողբերգական անգիտութեան մէջ զոհւեցիք իսկական յեղափոխականին վայել ասպետական անվնասութեամբ...

Հանգիստ ձեր ոսկորներին, թանկագին ընկերներ, ձեր տւած վերջին դասը սուրբ է մեզ համար, արիւնի տառերով արձանագրում ենք մեր յիշողութեան մէջ։

ԲԱԲՇԷՆԻ ԿՈՒԻԸ

(ՆԱՄՄԱԿ ԲԱՂՔՇԷՆ)

Աղբիւրի և իր քաջարի խումբին գոյութիւնը կառավարական շրջանակներու բուռն մտատանջութեան յիւթն եղած է ժամանակէ մը իվեր։

Նոր կուսակալը Պօլսէն եկած ատեն յատուկ հրա-

հանգ ստացած էր հնար եղածն ընել Աղբիւրը ողջ կամ մեռած ձեռք ձգելու համար։

Կառավարութիւնը զգուշացաւ սակայն իսկզբան աղ, մուկ հանելէ, եւրօպական ներկայացուցիչներու ուշը չհրաւիրելու համար այդ խումբ մը աճնւերներուն վրայ, որոնք հայ յեղափոխութեան անսպառ կորովը կը մարմնացնէին ջարդակոծ հայրենիքին մէջ, Այդ նպատակով էր, որ հայերէ և թիւրքերէ կազմւած յանձնաժողով մը դեռ ամառս գիւղերը պտըտեցաւ գիւղացիներէն խոստում և ստորագրութիւն առնելու, որ հայ քաջերուն հիւրընկալութիւն չտրւի։

Օգուտ չըրաւ։

Կառավարութիւնը կարծեց աւելի յաջողութիւն ունենալ բացարձակ հալածելով այդ կտորիճները, և ահա սկսաւ ընդհարումներու շարք մը, որ աւելորդ անգամ մը երևան բերաւ հայ յեղափոխականին բարոյական և ռազմական գերազանցութիւնը թիւրք վարձկաններու հանդէպ։

Ընդհարումներու այդ շարքին մէջ նշանաւոր պիտի մնայ հոկտեմբեր 20-ի (հ. տ.) կռիւը։

Այդ օրը՝ Աղբիւրը և իր ընկերներէն 16 հոգի անցողաբար կը գտնւէին քաղաքէս կէս ժամու չափ հեռու գտնւող Բարչէն գիւղը։ Մատնութեան մը շնորհիւ — որուն աղբիւրը տակաւին անյայտ կը մնայ — կառավարութիւնը լուր առնելով՝ իսկոյն ջոկատ մը զօրք կը խրկէ, որ առտուն կանուխ ժամը 4-ին (ըստ տաճկաց) կուգայ կը պաշարէ գիւղի չորս կողմն ու սարերը։

Աղբիւր՝ անցած-դարձածէն իրազեկ, դուրս կ'ելլէ ընկերներով իր պահած տեղէն, կուի յարմար դիրք մը գտնելու, երբ թշնամին կը նկատէ անոնք և կրակ կը բանայ։

— Տղայք, կը պոռայ Աղբիւր, կուեցէք և դիմացի քարերը բարձրացէք։

Մեր քաջերը դիմադրելով թշնամիի կրակին, անվեր-դով կը յառաջանան գիւղին հանդէպ գտնւող բլուրը։ Այդ միջոցին թշնամի գնդակ մը մեր ընկերներէն մէկուն ոտքը կը վիրաւորէ թեթեւ կերպով։

Անգամ մը բլուրը հասնելէ ետք, մերոնք իսկոյն անջատ անջատ դիրքեր կը բռնեն քարերու ետեւ և հիմա իրենք են որ կըսկսին գնդակներու տարափը։

Ամբողջ երկու ժամ կը տեւէ կռիւը և թիւրք ջոկատը չի համարձակիր այլևս գլուխ բարձրացնել իր նախապէս գրաւած դիրքերէն։

Հրամանատարը կատղած՝ քաղաք կը վերադառնայ թնդանօթներ վերցնելու և մնացած զօրքն ալ բերելու կուի դաշտը։

— Ինչպէս եղաւ, կը հարցնէ կուսակալը, պիտի բռնէք, խորտակէք այս անգամ թէ ոչ։

— Կամ կը կոտորենք ամէնքն ալ, կամ ողջ կը բռնենք, այս անգամ ձեռքընուս չեն ազատիր, կը պատասխանէ հրամանատարը։

Օգնութեան հրաւերը հասած էր այդ միջոցին շրջակայքի քիւրդերուն, և ասոնք բազմաթիւ խմբակներով կուգային կը խոնւէին կուին տեղը, ետ չէր մնացեր քաղաքի խուժանն ալ, Սերօք փաշայի — այդպէս կը կոչեն իրենք Աղբիւրը — ձերբակալման գործին մասնակից գտնւելու պատիւը շատերը դրդած էր ձեռքն ինկած զէնքը վերցնել ու Բարչէն փութալ։

Բայց այդ ոգևորութիւնը շատ շուտ կըսկսի սմբիւ-

կուսի ասպարեզը դեռ չհասած, հեռաւոր տարածութեան վրայ, շալով կը սուրային ֆէդայիներու փնդակները, փողին կը բարձրանար ոտքերնուն մօտ, և մահը կը տարածէր իր թեւը խուժանի առաջին շարքերուն վրայ...

Ըփոթն է կ'իյնայ խառնիճաղանձին մէջ. և ինչպէս ճնճղուկներու երամը ցանցրիւ կը փախչի ուրուրին առջև, այդպէս կը վազվզէին ողորմելիները մեր աներևոյթ գնդակներու սլացքէն ահաբեկ...

Ընդարձակ տափարակին վրայ այդ խօշ վազվզողքը արագ ժպիտ մը կը սահեցնէ պահ մը ֆէդայիներուն կծկած շրթունքներուն վրայէն:

Ժամը 6-էր երբ թնդանօթներու առաջին որոտը կ'արձագանգէ շրջակայքը...

Կանոնաւոր զօրքը կատաղի կերպով կը կուէր, և անխնայ կը կրակէր իր փամփուշտները, մինչդեռ քաղաքէն անդադար ռազմամթերք էր որ կը հասցնէին իրեն: Իսկ ֆէդայիները, առանց իրենց պազարիւնը կորսնցնելու, արհամարհելով թնդանօթներու գոռումը, անվրէպ և անընդհատ կ'արձակէին մօսինները իրենց ուշը դարձնելով հրետաձիգներուն վրայ: Ամէն անգամ երբ թնդանօթները պարպելէն ետք, անոնք կը մօտենային լեցնելու վերստին, կը շէնէին մօսինները, կ'իյնար մէկը, և հրետաձիգները կը փախչէին, թնդանօթները թողած երեսի վրայ: Քանի մը անյաջող փորձերէ ետք, հազարապետը կը հրամայէ ջոկատին միահամուռ հրակել բոլոր հրացանները, կը բարձրանայ խլացուցիչ որոտ մը, և այդ միջոցին հրետաձիգները կ'աճապարեն կերպով մը լեցնել թնդանօթները: Ուսումբերը կը սուրան, բայց կամ կ'անցին ֆէդայիներու գլխուն վերէն, կամ կը զարնէին դիրքերու առջևը, կը փշրեն ու կը փշրեն, կը դղողեն գետինը, մազի չափ իսկ չլինասելով անոնց:

Ոգևորութիւնն է որ կ'աճի ու կ'աճի այդ վրիպանքներէն, և մերինները նորէն կ'ուղղեն իրենց շեշտահար մօսինները հրետաձիգներուն վրայ. չորսը կ'իյնան դիտապաստ, և անոնցմէ մէկը իրենց պետը, որ մեծ յարգ կը վայելէր կառավարութեան քով:

Թիւրք հրամանատարը կը շարի ու կը կատղի, տեսնելով թնդանօթներուն ալ անզօրութիւնը այդ ափ մը քաջներուն դէմ, և կը հրամայէ զօրքին ելլել դիրքերէն ու վրայ տալ: Զօրքը կը շարժի, բայց հազիւ քանի մը քայլ առած, հայ գնդակներու տարափին տակ տերեւի պէս կը թափթփին նախարարականները, և կը նահանջէ զօրքը, անիծելով հրամանատարը, և սրտին մէջ ուխտելով «ջան-ֆէդայիին» վրայ չերթալ ուրիշ անգամ:

Պուլը նորէն կը շարունակէ հեռաւորութեան վրայ, և այդ գոռում-գոչումին, գնդակներու շփոթին մէջ երբեմն երբեմն կը լսուի Աղբիւրին խրախուսական խօսքերը: Մերինները առիւծ կտրած կը կուլին, կ'երգեն ու կը կուլին, և խանդավառութիւնը կը հասնի տակաւ իր ծայր աստիճանին, մինչդեռ իրենց դիմացը թշնամի դիակներ գետին կը գլորւին իրարու ետևէ...

Ժամը 10-ին մօտերը թշնամի գնդակ մը գլխէն կը զարնէ մեր ընկերներէն բուլանդցի ՍԱՐԳԻՍ-ը. քաջը անծպտուն կը կքի և կ'աւանդէ իր հոգին: Քովի ընկերը լուր կուտայ Աղբիւրին

— Սարգիս չի գիտեմ քնաւ, ի՞նչ եղաւ:

— Բան չկայ. ահ թող քնէ, դուք կուեցէք, կը պատասխանէ Աղբիւր:

Պուլն անդուլ կատաղով կը տեւէ մինչև իրիկան մութը, բայց թշնամին իր բոլոր ճիգերուն հակառակ անզօր կը գտնուի մեր դիրքերուն մօտենալ:

Ալ ժամանակն է հեռանալու, շայց չորս կողմէն պաշարած են մերինները. թշնամին իր ներկայութիւնը կը մատնէ վայրենի աղաղակներով իր զոհ տուած այնչափ դիակներու տեսքէն մոլեգին:

Աղբիւր կը հաւաքէ իր ընկերները և բոլորը միասին անշուշտ կ'իջնեն դիրքերու մէկ կողմէն, որ եթէ պատահին թիւրքերուն՝ զարնեն ու անցնին: Վայրէջքը կը կատարուի շատ յաջող կերպով: Եւ ֆէդայիներն արդէն բաւական հեռացած էին, երբ թշնամին կը շարունակէր խաղալիս գնդակներ արձակել ամայացած դիրքերուն վրայ...

Մեր խումբէն մէկ հոգի կը նահատակուի, բուլանդցի Սարգիսը, 2 ընկեր ալ թեթեւ կերպով կը վերաւորուին: Թշնամին կորուստը 30-էն աւելի կը հաշւեն:

Պուլն օրը քաղաքին ամբողջը կը յարձակուի հայոց խանութներուն վրայ կողոպտելու նպատակով. հայերը կը դիմադրեն. երկու հոգի սպաննուած և 30 ալ վիրաւորուած են: Կառավարութիւնը կը փութայ սակայն խառնակութիւններուն առաջն առնել իսկոյն:

Բաբշէնի դէպքէն ետք տեղիս թիւրք ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է. ֆէդայիի ազդած սոսկումը իր գազաթնակէտին հասած է, այնպէս որ մութը պատելէն ետք, ալ տնէն դուրս ելլել չկայ հիմա. գիշերներն ալ քուններին վրդոված է. կը վախնան որ Սերոր փաշան յանկարծ քաղաքի վրան չյարձակի:

Կառավարութիւնը զգուշութեան համար կրկնապատկել տուած է գիշերապահներու խումբերը:

Բաբշէնի դէպքը մեծ տպաւորութիւն թողած է նաև մեր անտարբերներուն վրայ. ոգևորութեան շունչ մը սկսած է փչել հիմա. ալ հիմա պարծանքով ու յարգանքով կը յիշեն հայ ֆէդայիին անունը, որ նոր յոյս ու հաւատ բերաւ իրենց մարած սիրտերուն մէջ:

Փառք ու պատիւ ուրեմն ազատութեան այդ զինուորներուն:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Կ. Պ Օ Լ Ս Է Ն

4/16 յունւար 99

Օրւան նորութիւնն է հիմա զինուորական տուրքերու տարւան մը յետաձգումը, որուն «շնորհ» պատրիարքը, իրեններուն ըսելով, «քրտնաթո՛ր» աշխատութեամբ հազիւ կրցաւ ձեռք բերել: Աս ալ հին աճաւար ու թեւան նոր տիպն է ուրիշ ոչինչ: Անցեալ տարի ալ, իրաւ է, չպահանջեցին այդ տուրքը, բայց անոր փոխարէն տասն երեք տարւան տուրքեր սկսան հաւաքել անողոք խտուրթեամբ:

Նոր խաղը հիմա ալ պիտի վերսկսին. և ճիշդ ըսելով սկսելու բան ալ չմնաց. ո՞րը պակաս թողուցին: Երկրէն ստացա՞ մեր վերջին նամակները ընդվզել վարենութիւններ կը պատմեն. կառավարութիւնը այրի կի-

ներու կերակուրի ամանը կը քաշէ, կը ծախէ. պանդխտութեան գացողներու տուները քարուքանդ կ'ընէ, տուրքի փոխարէն փայտն ու քարը ծախելու համար...

Գաղափար մը տալու համար երկրի տնտեսական քայքայուն վիճակի մասին, կը բաւէ յիշել հետեւեալ իրողութիւնը, որ տեղի ունեցած է վերջերս. հայ գիւղացի մը, իր սովալուկ ընտանիքին կտոր մը հաց ձարելէ յուսահատ, իր արօրի զոյգ մը եղբ ծախու հաներ է... քսան և եօթը (27) դահեկանի:

Այս լուրերը մեծ յուզում պատճառեցին հոս ազգային շրջանակներուն մէջ... բայց այդքան միայն: Հիմնաւոր գործ մը կատարելու, թշուառութեան այդ օրէ օր սպառնալից դիրքին համեմատ հզօր օժանդակութիւն մը կազմակերպելու կամքը պակսեցաւ մինչև հիմա և կը պակսի տակաւին:

Օրմանեանը իրաւատէր լինելէն նախամեծար համարեց մուրացիկի դերը: Ազգային ընդհանուր հանգանակութեան մը ձեռնարկումը Դուռը արգիլած էր, իր կողմէն 4,000 ոսկի խոստանալով, և այդ գնումարը, որ երկու տարիէն աւելի է խոստացւած է, ամբողջապէս ալ վճարւած չէ տակաւին: Հայոց պատրիարքը նորէն յիշեց իր պապուկի դերը, և ձեռքը երկնցուց, մնացորդ 1,000 ոսկին ալ ստանալու համար...

Մինչև ե՞րբ պատրիարքարանը պիտի շարունակէ ողորմութեան այդ փշրանքներով խաբւիլ ու խաբել ժողովուրդը...

Որո՞ւ հետ քը խաղան. եթէ հաշի չառնենք իսկ կեանքերու այն ահռելի զոհերը, ազգի մը ոտնակոխ եղած պատիւը, (որոնց հատուցումը Ազատութիւնը թերեւս միայն կրնայ ըլլալ), հայ ժողովուրդը ջարդերուն պատճառով իբր լոկ նիւթական վնաս, մօտ չորս միլիօն օսմանեան ոսկիի կորուստ ունեցած է:

Պատրիարքը մոռնալու չէ որ իր պարտքն է յարգել տալ ԻՐԱՆԻՆԻՔԸ, իր պատիւն մէջ չարաչար թըշնամանաւ ժողովուրդի մը: Ի՞նչ եղաւ իր երկու տարւան քծինքներուն արդիւնքը. այդ հաշիւը պիտի պահանջի իրմէն. թող չմոռնայ թէ այդ հաշիւը որքան հիննայ՝ այնքան աւելի խստապահանջ պիտի գտնուի հայ ժողովուրդը, որ իր իրաւունքներուն դատաւարը կարգեց զինքը, և ոչ իր անունով ողորմութիւն հաւաքող:

Իրատեներու անյատակ տոպրակէն նոր մըն ալ լոյս ինկաւ: Պալատին առաջին քարտուղարութեան կողմէն կուսակալներուն ուղղւած այդ իրատէն, — որ իրազեկ շրջանակներու ըսելով յատկապէս հայոց համար հրատարակւած է — կը հրամայէ լուրջ միջոցներ ձեռք առնել «խաղաղութիւնը, անգործութիւնն ու ապահովութիւնը անվթար պահելու և ժողովուրդային դժգոհութեան ու տրտուկներու պատճառ չտալու համար» և այլն:

Աւելորդ կը համարինք աւելի երկար կանգ առնել հոս այս առթիւ: Իրատեներու ի՞նչ արժէք ունենալը ամէնքս ալ գիտենք: Կարեւոր է չմոռնալ միայն իրատէին վերջաբանը, ուր Երևոյցը կուսակալներուն ուշը կը հրաւիրէ «ԺԱՄԱՆԱԿԻ ԵՒ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՓԱՓԱՅԻՆ» վրայ: Մենք գիտէինք ատ, իսկ հիմա արձանագրենք հոս, որ Արդիւ Համիդ Խան Ղազն ալ պաշտօնապէս կը խոստովանի այդ փափկութիւնը... Կրէտէի ազատումէն ետք միայն:

Կ Օ Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Ր Ի Կ Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 10/22 յուն. 99

Պատմում են, որ Անդիթանի ապստամբութեան առիթով Չմերային պալատում կայացած «արքայական» խորհրդակցութեան ժամանակ, Բոմանօվների տոհմին պատկանող մեծ իշխաններից մէկը, որ, իբրև բացառութիւն, կարողացել է արքայական տիտղոսին միացնել մի քանի ազատական զգացմունքներ՝ վրդովւած բացականչեց.

— Քսան տարի է, ինչ լսում եմ այդ ուսացման փրկարար նախագծերի մասին և մեզ խոստացւած անթիւ բարիքների փոխարէն այն եմ տեսնում, որ Լեհաստանում ատում են ոռոսին, Ֆինլանդիայում արհամարհում են մեզ, Կովկասում՝ նախկին սիրոյ փոխարէն՝ սկիզբն է առել մի համատարած թշնամութիւն դէպի մեզ և մինչև իսկ Անդիթանում, ուր դեռ չեն չորացել ոռոսաց զօրքի արեան հետքերը, ապստամբութեան պատրաստութիւններ են տեսնում...

Ուսացում, ահա այդ բառն է, որի շուրջը ներկայումս պտտում է Պօթեդանօսցեվիան ճնշող քաղաքականութիւնը Ռուսաստանի բոլոր ծայրերում, և եթէ ուզում էք, նոյն իսկ կենտրոնում, որովհետև զրտնում են, որ այժմ նոյնիսկ ոռոսների մէջ կան ոռոսներ, որոնց պէտք է ուսացնել համարելով նրանց «ոչ-բաւականաչափ ոռոս», ներկայ «կուրսի» տեսակէտից: Բնական կը համարէք ուրեմն, որ ստանալով ձեր հրաւերը՝ երբեմն-երբեմն այստեղից «խաբրիկներ» ուղարկելու Կովկասի մասին, ես սկսում եմ հենց այդ «ուսացման» հարցից, որի վրայ այնքան անձնազոհաբար քրտինք են թափում Կովկասեան ղեկավարները, իրենց գլուխ ունենալով դեռ նմանը չտեսնւած մի այնպիսի կառավարչապետ, ինչպիսին է սենատօր իշխան Գօլիցին...

Բայց նախ մի պատիկ շեղում:

Գլխաւորապէս 1863-ի լեհական համարձակ, բայց անյաջող շարժումից յետոյ էր, որ Ռուսաստանում գլուխ բարձրացրեց հպատակ ազգութիւնների ուսացման քաղաքականութիւնը: Սակայն՝ շնորհիւ Ալէքսանդր I-ի, որի միտքը մի քանի հզօր թուիչքներ գործեց և որը ընդունակ էր օրինաւոր խորհրդականներ ընտրելու, այդ խաւար քարոզը չկարողացաւ լայն ճանապարհ բանար: Բայց անցան օրեր-տարիներ, և տեղի ունեցաւ մարտի 1-ի սպանութիւնը: Այն ժամանակ՝ համարեա կայսեր գիակը հողին յանձնելու հետ միասին՝ Պետերբուրգից հեռու տաւազրեցին նրա շրջապատողները, իսկ նոր կայսեր մտերիմ խորհրդատուները, յանձին Տօլստօյի և Պօթեդանօսցեվի, համոզելով Ալէքսանդր I-ին, որ մարտի 1-ի սպանութիւնը և ազգայնական հարցերը պետութեան ծայրերում՝ ոչ այլ ինչ են, եթէ ոչ նախորդ կայսրութեան ազատական հովերի արգիւնք, հրապարակ բերեցին մի այլ ծրագիր, որի հիմնական կէտերից մէկն էր կազմում ուսացման խնդիրը: «Ռուսացման» գործը՝ ուրիշ տեղերի հետ միասին Կովկասում ևս յառաջ տանելու համար՝ անհրաժեշտ դատեցին միանգամայն փոխել Կովկասեան

վարչութեան ուղղութիւնը, որը՝ յանձին փոխարքայ մեծ իշխան Միխայիլ Նիկոլաւիչի համապատասխան էր նոր հոսանքին, և ահա այդ նպատակով ջնջւեց կովկասեան փոխարքայութիւնը. Միխայիլ Նիկոլաւիչը, իբրեւ աննպատակալարմար մարդ, պահւեց Պետերբուրգում և նրա տեղը կառավարչապետի տիտղոսով Թիֆլիզ ուղարկւեց իշխան Դոնդուկով-Վորսակով:

Միխայիլ Նիկոլաւիչը կսկծալի սրտով հեռացաւ Կովկասից, որի հետ նա տարիների ընթացքում կապւած էր լաւ զգացմունքներով: Ես կը պատմեմ մի դէպք միայն, ցոյց տալու համար, թէ ինչքան սերտ էր այդ կապը: Ռուս-թիւրքական պատերազմի սկիզբներին, երբ Թիֆլիզի հայերը փոխարքայի միջոցով մի ուղերձ ներկայացրին կայսրին խնդրելով պաշտպան հանդիսանալ Օսմանեան Հայաստանի տանջւած ժողովրդին, գերմանական լրագրերում տպագրւեցին լուրեր, թէ Կովկասի հայերը՝ իրենց մի ականաւոր ներկայացուցչի միջոցով՝ ինքնավար Հայաստանի թագը առաջարկում են մեծ իշխան Միխայիլ Նիկոլաւիչին: Այդ լուրերը, ճշմարիտ է, շատ հեռու էին իրականութիւնից, քանի որ մինչ այժմ էլ ինքնավար Հայաստանի փոխարէն Թիւրքիայում գոյութիւն ունի միայն Հայկական դժոխք, բայց, ինչպէս երևում է, Պետերբուրգում, 80-ական թւականներին իսկ չէին մոռացել այդ՝ փոխարքայութիւնը ջնջելու ու փոխարքային Կովկասից հեռացնելու գործը շտապեցնելու համար...

Կովկասը, ցաւ է ասել, շատ շուտ զգաց, որ այդ երկու բարձր պաշտօնեաների փոփոխութիւնը լոկ անձնաւորութիւնների փոփոխում չէ, այլ ամբողջ սիստէմի: Թիֆլիզի մի քանի շրջաններում, ճիշդ է, յոյսեր կային, որ նոր կառավարչապետը իր կոչման բարձրութեան վրայ կը լինի, քանի որ յայտնի էր, որ նա նոր ազատւած Բուլղարիայի ինքնավարութեան գործադրողն եղաւ, բայց այդ յոյսերը շատ շուտով աներևոյթ եղան և յայտնւեց, որ իշխան Դոնդուկով-Վորսակովի «բուլղարական անցեալից» մնացել են միայն դժգոյն յիշատակների փշաքններ: Հազիւ մի տարի անցած, իշխանը, արձագանգ տալով Պետերբուրգի յայտնի շրջաններին, սկսեց «դակղւներ» (զեկուցումներ) տալ թէ Կովկասի հայերը սեպարատիստական (անջատական) ձգտումներ են ցոյց տալիս և ուրեմն հարկաւոր է առաջն առնել, մոռանալով, որ Կովկասը ռուսաց տիրապետութեան տակ անցնելուց յետոյ՝ երբեք առիթ չի տւել այդ տեսակ թշնամական «դակղւներին» և կասկած ների... Եւ «առաջն առնելու» սկզբի քայլն այն եղաւ, իր 1885 թւին, ամբողջ Ռուսաստանի և Եւրոպայի աչքերի առաջ, նա փակեց հայոց եկեղեցական դպրոցները, թւով մօտ 500, փողոցներում թողնելով այդ դպրոցներում սովորող մօտ 20 հազար երկու սեռի երեխաներ՝ 900 ուսուցիչներով և վարժուհիներով...

Որպիսի բռնութիւն...

Այդ տխուր, նմանը չտեսնւած անարդարութեան ականատեսները պատմում են, որ ամբողջ Անդրկովկասի ժողովուրդը, նոյն իսկ շատ տեղ հայերի հետ միասին վրացիներ, թուրքեր, ռուսը արտասուքները չէին կարողանում զսպել, երբ տեսնում էին, թէ ինչպէս ոստիկանները՝ հրելով և խփելով՝ ուսումնարաններից դուրս էին քշում փոքրիկ, 10-12 տարեկան անմեղ երեխաներին, որոնք գրքերը կռան տակ առած, կծկւած դրպ-

րոցների սենեակներում և պատշգամբներում, լաց ու կոծով գոչում էին:

— «Մի դուրս արէք, մենք ուզում ենք կարգաւ ինչու էք դուրս անում...»

Իսկ պ. Եանովսկին, կովկասեան 'ուսումնարանական շրջանի այդ չար հրեշտակը, որ իր ամբողջ 50-ամեայ գործունէութեան ընթացքում չի բաց արել գոնէ մի երրորդ մասը այն դպրոցների, որ նա մի ամսում փակեց՝ ոգևորւած զեկուցումներ էր տալիս միսիստրին և կառավարչապետին, թէ «գործը յաջողութեամբ է առաջ գնում» — այսինքն՝ դպրոցները փակւում են առանց ընդդիմադրութեան հայերի կողմից: Ժողովուրդական «ուսումնարանութեան» պաշտօնեային, իհարկէ, վայել էր հրպարտանալ դպրոցների փակումով մի այնպիսի երկրի մէջ, որը՝ իր խաղաղ զարգացման համար՝ մի կարիք միայն ունի, այն է՝ դպրոցների կարիք... Այսպէս էր այն ժամանակի «կուրսը», և Եանովսկին հանգիստ խղճով ստանում էր իր այդ «ուսացման» եռանդի համար նոր շքանշաններ, բարձր աստիճաններ...

Վրայ հասաւ 1887 թւականը — մի անմոռանալի տարի կովկասեան հայերի պատմութեան մէջ: Պէտք է մտցւէր ընդհանուր զինւորագրութիւն, մի նորութիւն, որ անձանթ էր հային ամէն տեղ, սկսած այն օրից, երբ նա զրկւեց իր քաղաքական անկախութիւնից: Ռուսացման գործի գլուխ անցած պաշտօնեաները, իշխան Դոնդուկով-Վորսակովի ղեկավարութեամբ, շտապեցին այդ առիթն էլ շահագործել, ցոյց տալու համար, որ հայերը դէմ են այդ կարգադրութեան, որ Անդրկովկասի զանազան կողմերում դիմադրութիւններ են պատրաստում և ուրեմն պէտք է խիստ միջոցներ ձեռք առնել... Եւ Թիֆլիզի իշխանութեան կողմից, ինչպէս հաստատ յայտնի է, հրամաններ տրւեցին՝ պատրաստ լինել ամենաթոյլ փորձերն անգամ փշոքելու: Այդպիսով պետական մի այնպիսի պարզ կարգադրութիւն, ինչպիսին է հայրենիքի պաշտպանութեան գործը ընդհանրացնելը զինւորագրութեան միջոցով՝ դարձաւ մի կողմից մի նոր զէնք «ուսացում» տարածելու և միւս կողմից՝ կասկածներ յարուցանելու...

Սակայն Կովկասի ամբողջ ազգաբնակչութիւնը, բացի մահմեդականներից՝ այդ նոր փորձանքով ևս չգայթակղւեց: Դա անսպասելի էր կովկասեան իշխանութեան համար — անսպասելի մանաւանդ այն պատճառով, որ իշխանութեան ներկայացուցիչներին յայտնի էր, թէ ինչ այլանդակ լուրեր են պտըտում ամբոխի մէջ զինւորագրութեան պատճառով: Հաւատացնում էին, թէ հայ զինւորացուներին պէտք է տանեն Ռուսաստանի խորքերը և այլևս չպիտի վերադարձնեն. պատմում էին, թէ հայ սալդաթիւն (զինւոր) պիտի ստիպեն կրօնը փոխել, լեզուն մոռանալ և վերջումն էլ ռուս աղջկայ հետ պսակւել և ռուսանալ... Այդ բոլորը լաւ գիտէին իշխանութեան ներկայացուցիչները, իրենց անթիւ լրտեսների միջոցով, բայց մի որ և է «հայկական շարժում» ստեղծելու տենչանքը այնքան մեծ էր յայտնի շրջաններում, որ ոչ մի կարգադրութիւն չեղաւ ո՛ր և է կերպով պարզելու այդ թիւրիմացութիւնները և հասկացնելու ամբոխին, որ նա սխալւած է:

Հայերի համար՝ այս բոլորովին նոր ծառայութեան սկզբնաւորութեան միջոցին միայն մի դէպք պատահեց, որ և ես անհրաժեշտ եմ համարում պատմել, որովհետեւ

տեղա, իմ կարծիքով, կրկին անգամ ցոյց է տալիս՝ թէ երբեմն ինչ վայրենութեան է հասնում իշխանութեան անխղճութիւնը Անդրկովկասում: Վարաբաղի յետընկած ծմակներում, նահապետականութեան մշուշով ծածկւած Տաթևեան գիւղերից մէկում, պառաւ կանայք, կուրծքները ծեծելով՝ պատում էին միմեանց, որ իրենց տղաներին «սալգաթ» տանելուց յետոյ՝ իրենց աղջիկներն էլ պիտի տանեն՝ ուստի «սալգաթներին» կին դարձնելու համար... Երեւակայել կարող էք, թէ մի այդպիսի սոսկալի շուկ, առանց հերքման մնալով՝ որքան էր վերաւորում ընտանեկան խիստ բարբերով կրթած գիւղացիների սիրտն ու հոգին... Այդ բոլորը լաւ գիտէր նահանգական ոստիկանութիւնը, բայց փոխանակ մի պաշտօնեայի, մի հոգեւորականի կամ մի այլ միջոցով պարզելու այդ թիւրիմացութիւնները, հրամանագրեց Զանգեզուրի ոստիկանութեան «լաւ պատրաստութիւններով» դնալ այն գիւղը և ամէն մի փորձ տեղն ու տեղը ոչնչացնել... Տեղի ունեցաւ չտեսնւած մի բռնութիւն... Երբ 90-ամեայ մի հայ գեղջկուհի և գիւղական ալեգարդ հայ քահանան բերան բաց արին, թէ «իրանք թագաւորի թախտին ղուրբան կ'երթան, բայց իրանց աղջիկներին չեն տալ, որ ուստի կին չլինեն...» նրանց իսկոյն կալանաւորեցին, գանակոծեցին և, իբրեւ «պետական յանցաւորներ», ամէնախիստ հսկողութեան տակ ուղարկեցին կենտրոնական բանտը... 2 գտնեց մի հատիկ օրինաւոր պաշտօնեայ, որ ասէր. «մայրիկ ջան, սխալում ես, թագաւորը չի թոյլ տայ, որ քո աղջկան քեզանից խլեն. խլողին էլ ընդհանազեղ, օրէնքով կը պատժի»: Եւ փոխանակ պատժելու այդ տեսակ իշխանաւորներին, 90-ամեայ գեղջկուհուն և ծերունի քահանային տանջեցին աքսորավայրերում, որովհետեւ նրանք համարձակել էին ասելու, թէ «մեր աղջիկներին չենք տալ, որ ուստի սալգաթի կին չլինէք...»

Եւ այդ դարձեալ յանուն «ոստացման»...

Բարեբախտաբար այդ գրութիւնը ընդհատեց: Պետերբուրգի կառավարչական շրջաններում երեւան եկաւ քաղաքավար դժգոհութիւն այդ ծայրայեղ միջոցների դէմ: Ինքը Գոնգուկով-Վօրսակով անընդունակ դարձաւ գործերով զբաղւելու. նա ընդունում էր իրան գիմող և գործի մարդոց առաւօտեան ժամը 7-ին միայն, որովհետեւ դրանից յետոյ՝ մինչև ուշ գիշեր՝ նա գինու գերի էր... Եւ ահա երբ նա ասպարէզից իջաւ, Պետերբուրգում «նպատակաւոր» դատեցին կառավարչապետի պաշտօնը յանձնել գեներալ Շերեմետեւին, որը դեռ կառավարչապետի օգնական եղած ժամանակ ճանաչւած էր իբրեւ խաղաղ և տեղական տարրերի հետ հաշտութիւն կայացնելու քաղաքականութեան կողմ: նակից: Ճշմարիտ է, Շերեմետեւի, իբրեւ պետական մարդ, շատ խոշոր ուժ էր, և, ինչպէս ասում են, երկնքից աստղեր չէր վէր բերում, բայց իբրեւ հակառակորդ «հալածասէր քաղաքականութեան» և իբրեւ բարեխիղճ կառավարիչ, իր գործունէութեամբ աւելի օգտակար եղաւ երկրին, քան թէ միւսները իրենց «կարեւոր» ծրագրերով... Եւ այդ պտածուով Շերեմետեւի յիշատակը մինչև այժմ էլ յարգանքի խոր զգացմունքներ է յարուցանում կովկասեան ազգերի բոլոր խաւերում:

Բայց ահա եկաւ արտասովոր լիազօրութիւններով իշխան Գօլիցինը և սկսեց «ոստացման» ու «հայկական

հալածանքների» մի այնպիսի շրջան, որի նմանը մինչև այժմ կովկասում ոչ ոք չի տեսել և չի յիշում... Այս նոր «շրջանը» շատ բնորոշ է և հետաքրքրական, ուստի ես կը ներեմ նրան մի առանձին թղթակցութիւն, յաջորդ անգամ...»

Վերջացնում եմ նամակս մի նկատողութեամբ: Գուցէ, իմ յաջորդ թղթակցութիւնների մէջ՝ ծանր փաստերի ազդեցութեան տակ, ես ակամայ դուրս գամ չափաւորութեան շրջանակից, որի մէջ աշխատեցի մնալ այս անգամ, և գործածեմ կծու, դառն լեզու: Բայց դա չի նշանակի, թէ այս տողերի գրողը ներշնչւած է թշնամութեամբ դէպի Ռուսաստանը:

Ընդհանազեղ: Ես ուստի ժողովրդի անկեղծ բարեկամն եմ և շատերի հետ չեմ ուրանում այն փաստը, որ կովկասը Ռուսաստանի շնորհիւ յարեց եւրոպական քաղաքակրթութեան: Բայց այդ խոստովանել՝ չի նշանակում լռել և թագցնել բռնութեան և անարդարութեան սոսկալի փաստերը, որոնք ոչ միայն ճնշում են փոքրիկ ազգերը, այլև արատաւորելով Ռուսաստանի համբաւը, ջլատում են նրա ներքին զարգացումը: Եթէ Ռուսաստանի մէջ լինէր մամուլի ու խօսքի գէթ մասնակի ազատութիւն, ամէն մի օրինաւոր քաղաքացի իր պարտքը կը համարէր նոյնիսկ պետութեան մէջ բարձրացնել իր բողոքը «ուսացման» անունով կատարող ճնշման դէմ, ինչպէս այդ արեցին Պետերբուրգի մի քանի հրատարակութիւններ անցեալ տարի, երբ կայսրը այցելեց Ղեհաստան և այդ առիթով կարելի եղաւ, գէթ մի քանի օր, խօսալ ուսուցական յարաբերութիւնների մասին: Բայց, դժբախտաբար, այդ ազատութիւնը չկայ Ռուսաստանում, ուստի շնորհիւ կրիտիկայի և բողոքի բացակայութեան, այդ «պօլիտիկան» գնալով դառնում է աւելի ամբարտաւան, աւելի անսանձ...»

Է. ԱՎԵՐԻԿԻՆ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1898

Տարիները շատ երեւոյթին նմանում են իրար: Ամէն տարի մենք հանդիսատես ենք միեւնոյն լարւած համաշխարհային ճգնաժամին, որը փոխանակ լուծւելու, աւելի ևս կնճռոտում է. ամէն տարի նոր-նոր անակնկալներ մըլենցնում են քաղաքական հօրիզօնը և ընդհանուր պատերազմի յարաճուն երկիւղը միշտ աւելի և աւելի պաշարում է քաղաքակրթ մարդկութեան:

Պատմութիւնը սակայն կատարում է իր պաշտօնը: Մի քայլ դէպի աջ մի քայլ դէպի ձախ, ոլոր-մոլոր առաջ է մղում պատմութեան անիւը, անընդհատ յեղաշրջելով ու կերպարանափոխելով ազգերի սօցիալական-քաղաքական գոյութիւնը. հին շէնքերը փլատակւում են և նրանց տեղ նորերն են կառուցւում. ամբողջ պետութիւններ, որոնք երբեմն քաղաքակրթութեան հուշակաւոր որրաններն էին համարւում, կործանւում են կամաց-կամաց և նրանց փոխարէն բարձրանում են ուրիշները, աւելի կենսունակները: Երէկ թզուկ Եւպոնիան էր. որ ուժգին մի հարւածով գետին փոխեց վիթխարի Զինաստանին, այսօր Հիւս. Ամերիկայի Միացեալ

Նահանգներն են, որ մի շարք փայլուն յաղթութիւններով դուրս քշեցին սպանիացիներին իրենց լայնարձակ գաղութներէն: Հին աշխարհը նահանջում է նոր աշխարհի գրոհի առջև... Նոր-նոր ազատ ու ինքնավար երկիրներ դարաւոր անարգ գերութեան լուծը թօթափելով՝ հիւրընկալում են քաղաքակրթ ժողովուրդների հսկայական գերգաստանի մէջ. դա միշտ միենոյն դրաման է, որ խաղացում է հասարակական եւօրեցիայի թատրի վրայ. մարդկային արիւնոտ պատմութեան միջից կասկարմիր գծով անցնում է ժողովրդային ազատագրութիւնների պայծառ ու յաղթական շարքը, որը տակաւին չի ասել իր վերջին խօսքը:

Քաղաքական ծանրակշիռ դէպքեր ալեկոծեցին միջազգային դրութիւնը 1898-ին: Համաշխարհային քաղաքականութեան համար ամենավճռական իրողութիւնն այն է՝ որ Հիւս. Ամերիկան, Սպանիայի հետ ունեցած իր պատերազմից յետոյ, դարձաւ հաւասարազոր գործօն մեծ պետութիւնների արեօպագի մէջ: Հարկ չկայ երկարելու, թէ որչափ բարեբար եղաւ իր հետեւներէն լուծ այդ պատերազմը, որի սկզբնապատճառը Կուբան էր — սպանիական բարբարոսութիւններին մասնաւոր Անտիլեան մեծածաւալ կղզին: Ապրիլի 23-ին հրատարակեց ազատարար պատերազմը և օգոստոսի 7-ին Սպանիան՝ յուսահատ իր կրած սարսափելի ջարդերից՝ հանդիսաւոր կերպով հրաժարեց Կուբայից... Իր ժամանակին գրեւէ ինքը արդէն այն դիւցազնական ու անվեհեր պայքարի մասին, որ 40-ական թւերից սկսած մղւել էր յեղափոխական Կուբան: Նա ևս զոհ էր սարսափի ու թալանի արիւնոտ քաղաքականութեան, և Սպանիան՝ Կուբացիների դարաւոր դահիճը՝ այդ խելացնոր քաղաքականութեամբ իր սեփական գերեզմանը փորեց, այն ինչ Կուբայի համար բացեց արշալոյսը մի նոր, ազատ ու երջանիկ կեանքի:

Պարիզում կնքած դաշինքի համաձայն՝ Հիւս. Ամերիկան ոչ միայն իր հովանաւորութիւնը հաստատեց Կուբայի վրայ, այլ և իւրացրեց Ֆիլիպպին կղզիները, որով նա մտաւ անմիջական շփման մէջ եւրօպական մեծ պետութիւնների շահերի հետ արեւելեան Ասիայում, ուր վաղ թէ ուշ պիտի վճռէին քաղաքական աշխարհի ամենակնճռոտ հարցերը:

Ամերիկան ևս ուրք կոխեց միլիտարիզմի ճանապարհի վրայ. նրա նաւատորմը այսօր ոչնչով պակաս չէ գերմանականից կամ ռուսականից, բայց նա դեռ զինւում է. վերջին նաւաւորութիւնը հրապուրած՝ նա ցամաքային ու ծովային զօրութեան խոշոր ծրագրեր է կազմում:

Միացեալ Նահանգների այդ յանկարծական թռիչքը խիստ կարեւոր է մանաւանդ երկու աշխարհակալող տէրութիւնների՝ Անգլիայի և Ռուսաստանի փոխադարձ յարաբերութիւնների տեսակէտից: Այդ յարաբերութիւնները կամ աւելի որոշ ասեմք՝ այդ հակամարտութիւնը երկու տիտանների միջև այսօր, ինչպէս միշտ, ներկայացնում է դեռ համաշխարհային քաղաքականութեան ծանրութեան կենտրոնը, որի շուրջը զուգորդւում են անթիւ մանր ու խոշոր ինդիւիդներ:

Հակամարտութիւնը որ բացարձակ թշնամութեան է վերածւած. նա երեւում է գրեթէ ամէն տեղ, մօտ ու հեռու արեւելքում և եւրօպական ցամաքի վրայ, նա արտայայտւում է գրեթէ ամէն մի քաղաքական անցքի

միջոցին. սպանամերիկեան պատերազմ, չինական խընդիր, Թիւրքիայի վերանորոգում, հայոց հարց, Եգիպտոս, Ֆաշօդայի միջադէպ, զինաթափութեան առաջարկ և այլն և այլն, — կայ արդեօք միջազգային կշիռ ունեցող որ և է խնդիր, որ ուղղակի կամ անուղղակի չօշափէր ազգերի ճակատագրի վրայ ծանրացող երկու վիթխարի ուժերի այդ ահաւոր հակամարտութիւնը:

Պատերազմը և Ամերիկայի յաղթութիւնը մօտեցրին երկու անգլուսաքսօն ցեղերը, որոնք աննշան պատճառներով զատւած էին մինչև այն: Պատերազմի միջոցին Անգլիան չէր թագցնում իր ջերմ համակրանքը դէպի Միացեալ Նահանգների հանրապետութիւնը. Անգլիայում իրար յաջորդող քաղաքական ճառեր ծանուցանում էին արդէն երկու պրիւնակից պետութիւնների մօտալուտ դաշնակցութեան մասին: Անգլիան Ռուսիայի դէմ զրահաւորելով՝ որոշել է հրաժեշտ տալ բազմիցս հռչակւած splendid isolation-ին (վեհապանծ մեկուսացում) և նիզակակից փնտռել Այսօր հեռանկարի մէջ նշմարւում է արդէն Ծայրագոյն Արեւելքում մի նոր երրեակ նիզակակցութիւն, որը պիտի ուղղւի էապէս ռուսական աշխարհակալութիւնների դէմ:

Նախորդ տարւում Անգլիայի և Ռուսաստանի հակառակութիւնը 2ինաստանում մի վայրկեան շատ սուր կերպարանք առաւ: Երբ խաղաղ ճանապարհով Գերմանիան գրաւեց Կիպու-2էու ծովախորշը, և անմիջապէս սկսեց մի տենդային որսորդութիւն, ուր առիւծի բաժինը Ռուսիային ընկաւ: Զեռք բերելով Պօրտ-Արթուրը, նա միենոյն ժամանակ իրաւունք ստացաւ սիբիրեան երկաթուղու գիծը հասցնել մինչև իր այդ գրաւած կէտը Մանջուրիայի վրայով: Անգլիան՝ զայրացած Ռուսաստանի այդ աջողութիւններից՝ բողոքեց հրապարակական գրգռիչ ճառերով: Բողոքեց ու լռեց:

Սակայն պէտք է խոստովանել, որ չնայելով Ծայրագոյն Արեւելքում կրած այդ ձախողութեան՝ Անգլիայի պրէստիժը ընդհանուր առմամբ զգալի կերպով բարձրացաւ 1898-ում: Զօն Բուլը անցեալ տարի մի անգամ ևս շեշտեց իր առաջնորդող դերը համաշխարհային քաղաքականութեան մէջ. նա բարեկամացաւ Հիւս. Ամերիկայի հետ և — որ գրեթէ անսպասելի էր — մերձեցաւ նաև Գերմանիային: Անգլիայի և Գերմանիայի միջև այսօր նոյնիսկ մի դաշինք է կապւած, որի էութիւնը յայտնի չէ տակաւին, բայց նա վերաբերւում է երկու պետութիւնների համերաշխ քաղաքականութեան Ափրիկեում:

Գտնելով այդքան նպաստաւոր հանգամանքների մէջ՝ Անգլիան սուր կերպով յարձակեց Ֆրանսիայի վրայ: Ֆաշօդայի միջադէպը անցեալ տարւայ քաղաքական ամենանշանաւոր անցքերից մինը պէտք է համարել: Ֆրանսիան, վստահ լինելով թերևս իր հզօր դաշնակցի աջակցութեան վրայ, փորձեց խախտել անգլիական զօրութիւնը Նեղօսի հովտում: Սակայն ստիպւեց խոնարհւել Անգլիայի գերազանցութեան առջև և դեռ երկիւղ են կրում, որ Զօն Բուլը թերևս չբաւականանայ Ֆաշօդայի յաղթանակով... Այդ տարակուսանքներին ուժ է տալիս Անգլիայի անընդհատ զրահաւորելը:

Բրիտանական գերազանցութիւնը, որ շնորհիւ վերջին տարիներում արած մի շարք ամօթալի զիջումներին՝ բաւականաչափ նսեմացել էր՝ կրկին զգալ տուեց իր ուժը երկրագնդի չորս կողմերում: Հզօր Ֆրանսիայի խո-

նարհանել, Սուգանի փայլուն յաղթութիւնները և միւս նոյնպէս ամերիկեան ու գերմանական բարեկամութիւնը բարձրացրին անգլիական ազդեցութիւնը Զինաստանում և ամէն տեղ, ամէն տեղ զգացին, որ աշխարհիս ճակատագիրը չէ ենթարկած միայն միահեծան ցարի քմահաճ հրամանատարութեան:

Ֆրանսիան օրըստօրէ փոքրանում է: Ներքուստ ջլատւած և ուժասպառ, արտաքուստ անօգնական ու անմխիթար: Միշտ աւելի և աւելի կորցնում է նա իր կշիռը միջազգային քաղաքականութեան մէջ: Եթէ նախապաշարած լինէինք, պիտի ասէինք, որ նախախնամութեան արդար վրէժխնդրութիւնն է ցոլում Ֆրանսիայի այժմեան ողբալի կացութեան մէջ, — վրէժը հազարաւոր խողեսողած հայերի՝ որոնց արիւնի մէջ այնքան ոճրագործ կերպով մեղսակից եղաւ Հանօտներ Ֆրանսիան, այն Ֆրանսիան՝ որ իր վաղեմի ասպետական աւանդութիւնները ոտնակոխ անելով՝ իր դաշնակցի ստրկական կամակատարն է հանդիսանում արեւելեան արիւնոտ ողբերգութեան մէջ:

Ինչքան չերազեցին Ֆրանսիական շովինիստները Ռուսիայի հետ բարեկամանալով... Իսկ այժմ ամէնատագնապալից վայրկեանների մէջ հզօր դաշնակիցը ձգում նրանց իսաստ բախտի: Անպիտան հանդիսաւոր կերպով պառնում է Ֆրանսիային, խոնարհեցնում է նրան, իսկ այդ խնկարկած դաշնակիցը տեղից չի շարժուում ու խոր լուծիւն է պահում: Ֆրանսիան վառւած է տակաւին «ընդհանր»-ի տենչանքներով, իսկ Ռուսաստանը զինաթափութիւն ու խաղաղութիւն է հռչակում: Ֆրանսիան պարզ տեսնում է, որ ինքը Ռուսաստանի ձեռքին գործիք լինելուց զատ՝ ոչ մի ակնկալութիւն չունի նրանից: Յարաբերութիւնները պաղում են, երկպետեան դաշնակցութեան խախտւոյն լինելը գնալով միշտ աւելի շեշտւում է: Ֆրանսիայի լաւագոյն զաւակները վաղուց արդէն գուշակել էին այդ:

Յանուն համաժողովային իդէալների չէր, որ Ռուսիայի վեհապետը միջազգային յարաբերութիւնների լարած վիճակում յանկարծ հրապարակ նետեց իր շառաչալից մանիֆէստը: Թերեւս նիկոլա I անձամբ ներշնչւած է համաշխարհային խաղաղութեան ոգով. բայց երբեք չպիտի մոռանանք, որ մանիֆէստը ռուսական դիւանատնից է բղխում և ուրեմն անհրաժեշտաբար իր պատճառական աղբիւրն ունի ռուսական շահերի մէջ:

Արտաքուստ ծափահարեցին, խնկարկեցին խաղաղարար ցարին, բայց ներքուստ ոչ ոք չգայթակղեց, ոչ ոք չհաւատաց, ապացոյց՝ որ այսօր աւելի քան երբ և իցէ պետութիւնները հսկայական ճիգեր են թափում աճեցնելու իրենց զօրքն ու նաւատորմը: Գերմանական կայսրը առաջինն էր, որ ողջունեց ցարի մանիֆէստը, և ողջունեց, ասելով՝ որ նա տեսնում է խաղաղութեան գրաւականը միայն գերմանական ուժեղ, կազմ ու պատրաստ զօրքի մէջ: Դա մի քաղաքավար ապտակ էր ցարիզմին Վիլհելմ կայսրի կողմից, և որքան էլ վերջինս ջանք թափէ, չպիտի աջողէ այլևս սիրաշահել իր «եղբորը», «բարեկամին», «նիկոլա I-ին»: Արդէն Անգլիային ձեռք մեկնելով և սուլթանական մրցակրկէսում յաղթական պսակները վայելելով՝ Վիլհելմ կայսրը անջրպետ ձգեց իր և ցարի կառավարութեան միջև:

Թէ որքան ազդեցութիւն ունեցաւ այդ մանիֆէստը խաղաղութեան գործի վրայ — այդ ցոյց են տալիս, ի միջի այլոց, հետեւեալ փաստերը: Գերմանական Ռայխստագը գումարելուն պէս՝ կառավարութիւնը պահանջեց զօրքի համար մինչև օրս եղած ահագին ծախքերին աւելացնել 28-ական միլիոն մարկ իւրաքանչիւր տարի և 130 միլիոն միանւագ. և դա դեռ սկիզբն է: Միացեալ Նահանգներում մտածում են վերակազմել ցամաքային զօրութիւնը և ստեղծել 100,000 մշտակայ զօրք: Բայց մանաւանդ տենդային ցասկոտութեամբ զինւում է Անգլիան: Լաւ հասկանալով, որ խաղաղութեան մանիֆէստը գլխաւորապէս իր դէմ է ուղղւած՝ նա հրէշային գումարներ է վատնում՝ իր վիթխարի նաւատորմը աւելի ևս ուժեղացնելու:

Ինքը Ռուսաստանը ևս յետ չի մնում. «Թայմզ»-ի թղթակիցը վերջին պահուն հաղորդում է Սեւաստապոլից, որ ռուսական նաւարանները գործում են արտասովոր աճապարանքով և որ գունդագունդ զօրքեր են ձամբւում անդադար հեռու արևելք և դէպի Պովկասի ռուս-տաճկական սահմանները: Թւում է, թէ պատերազմական ահել փոթորիկների նախնթաց օրում ենք գտնւում:

Ռուսի ընդհանրապէս չեն հաւատում որ մօտ ապագայում գումարելիք խաղաղութեան այդ համաժողովն ունենայ որ և է գործնական արդիւնք միլիտարիզմի տեսակէտից, թէև, անշուշտ զինաթափութեան մանիֆէստը տեսականապէս ունի որոշ արժէք, իբրև ժամանակի նշանակ, իբրև մի խոշոր ապացոյց այն սարսափի, որը սկսում են զգալ միլիտարիզմի առաջ նոյն իսկ միահեծան ինքնակալները:

1898-ի միջազգային քաղաքականութեան մէջ Արևելեան հարցը ևս ունեցաւ իր բաժինը: Արևելեան հարց — Թիւրքիայի անդամահատման հարց: Օսմանեան կայսրութեան ճակատագրական քայքայումը մի քայլ ևս առաջ գնաց: Վրէտէն, որ արդէն յոյն-թիւրքական պատերազմի սկզբից ազատ էր հրատարակւած, վերջապէս ստացաւ փափագած ինքնավարութիւնը: Յեղափոխական փոթորիկները, որոնք այդ անբախտ կղզու վրայ պարբերաբար բռնկւելով, վերգովում էին մշտապէս Եւրոպայի խաղաղութիւնը, տեցին իրենց բնական անհրաժեշտ ու բաղձալի հետեւեքը. Վրէտէն ազատեց, և ո՞ր խելացնորը կը յանդգնէ պնդել, որ դա արդիւնք չէր կրէտացիների յարատև ու սպառազէն բողոքի...

Եւրոպական կոնցերտը ներդաշնակ չնւագեց. Գերմանիան և Աւստրիան քաշուեցին ասպարէզից. Գերմանիայի կայսրը հանդիսացաւ ջերմ պաշտպան Թիւրքիայի ամբողջութեան և հէնց կրէտական հարցի ամէնատաք վայրկեանին Պոլիս գալով իր ամուսնու հետ, սիրալիկ հիւրընկալեց Աթուրկ Համիդի մօտ, ամբարցրեց իր բարեկամութիւնը, որը պիտի նպաստէ ապագայում կապիտալիստ Գերմանիայի ազդեցութեան տարածմանը սուլթանական իշխանութեան սահմաններում: Երկու պետութիւնների հրաժարելը սակայն յապաղեցրեց միայն խնդրի լուծումը, բայց չյաջողեց խափանել այն: Զորքեպետեան կոնցերտը առաջ տարաւ Վրէտէի դատը և այսօր դարաւոր ճնշումներից ու արիւնհեղութիւններից սմբած կղզին ազատ ու բախտաւոր ժպտում է քրիս-

տօնեայ և ցեղակից իշխանի հովանաւորութեան ներքոյ:

Ծանր է եւրօպական դիւանագիտութեան կոչումը Արեւելեան խնդրի հոգի վրայ, ուր նա պէտք է յաղթահարէ այնքան հակառակութիւններ որ յաւակնութիւններն: Բայց որքան էլ նա ծանր ու կնճռոտ լինի, որքան էլ եւրօպական կօնցէրտը իր յաւիտենական ձգձգումներով պատճառ դառնայ շարունակ ապստամբութիւնների ու արիւնհեղութիւնների, բայց և այնպէս միութեարական է գէթ, որ նրա գործունէութիւնը վերջ ի վերջոյ յանգում է դրական արդիւնքի:

Արեւելեան հարցը կանգուն է միշտ: Թիւրքիայի աստիճանական կազմալուծումը պէտք է շարունակւի: Հ ա յ կ ա կ ա ն դ ա տ ն է այժմ, որ մակէդոնականի հետ արձանանում է դիւանագիտութեան սեղանի առջև:

ՀԱՅ-ԿՐԷՏԱԿԱՆ ՀԱՄԱԿՐՈՒԹԵԱՆ ՅՈՅՅԵՐ

Դեկտեմբեր 25-ին, կիրակի օր, Ալեքսանդրիոյ (Եգիպտոս) յոյն զառուծը, Կրէտական Եղբայրութեան նախաձեռնութեամբ, Կրէտէի ազատումը տօնած է մեծաշուք կերպով քաղաքին Ավերով գիմնագին մէջ:

Համոզեցին պաշտօնապէս մասնակցած է նաեւ Ալեքսանդրիոյ Կնք Կոմիտէն, եւ իր պատուիրակը հետեւեալ ճառը արտասանած հոս.

Հ. Յ. Դաշնակցութեան Ալեքսանդրիոյ Կոմիտէն որ կը տենչայ ազատութեան, արդարութեան ու մարդկայնութեան, կը մասնակցի այսօր Յոյն Դաշնակցի ցոյցին ողջունելու Կրէտէի մեր եղբայրները, որոնք ստացան վերջապէս իրենց անկախութիւնը, այնքան տառապանքներէ, եւ արդար դատին համար թափած այնքան արցունքներէ եւ արիւնէ ետք:

Այո՛, մեր սիրտն ալ այսօր ուրախութեամբ կը բարխէ հէլլէններուն հետ, որովհետեւ Կրէտէի ազատումը, ձեռք բերած իր զաւակներու այնքան վսեմ ու դառնակիքի հերօսական պայքարին շնորհիւ, կ'արժարծէ մեր յոյսը եւ մոռցնէ կուտայ մեզ պահ մը մեր աղէտներն ու մեր երկարատեւ նահատակութիւնը:

Այն բարեբախտ դէպքը որ կը տօնենք այսօր եւ որ բովանդակ տիեզերքին մէջ կը յուզէ արդար խիղճերու խանդավառութիւնը, կրկնապատկէ պիտի մեր կորովը եւ կատաղի մարտիկներ պիտի ընէ մեզ յաղթանակել տալու, նման համբաւաւոր կրէտացիներուն, սքրազան սկզբունքները ազատութեան ու մարդկայնութեան: Երանի՛ թէ այդ մեծափառ կղզիին պատկերը յուզէ միշտ մեծ ազգերը եւ ներշնչէ անոնց քրիստոնէական համերաշխութեան վեհ պարտականութիւնները:

Կեցցէ՛ ազատ Կրէտէն,

Կեցցէ՛ հէլլէնականութիւնը,

Կեցցէ՛ արդարութեան իդէալի համար կոիւր:

Նոյն ժողովին մէջ կարդացւած է նաեւ Դաշնակցութեան Կամքը ներկայացնող Մարմնին կողմէն Կրէտէի Ազգային Ժողովի նախագահին ուղղւած 20 Նոյ. 98 հեռագրին թարգմանութիւնը: Ժողովականները բուն ծափահարութիւններով ծածկած են մեր ընկերներու շնորհ համակրութեան այդ անկեղծ արտայայտութիւնները իրենց բախտակից եղբայրներու հասցէին:

Յաջորդ օրն իսկ, Պ. Լիմպրիտիս, Կրէտական Եղբայրութեան դեր-նախագահը, հետեւեալ նամակն ուղղած է մեր Կոմիտէի պատուիրակին.

Պարո՛ն,

Կրէտական Եղբայրութեան Եգիպտոսի Կոմիտէն խորապէս զգածւած է այն մասնակցութենէն որ ձեր Կոմիտէն ունեցաւ Յունական Դաշնակցին ազգային ուրախութեան ցոյցին մէջ, Կրէտէի օսմանեան լուծէն ազատման առթիւ:

Կրէտական դատին համար հայ ազգին համակրութիւնը անով մանաւանդ աւելի թանկ է մեզ, որ կը բղխի բարեկամ ժողովրդէ մը, որ կը կրէ նոյն տառապանքները, որոնցմէ անցաւ Կրէտէի ժողովուրդը, եւ որ նոյն ըզձանքներն ունի անոր պէս:

Մենք եղբայրներ եղանք դժբախտութեան մէջ: Իսկ հայրենակիցներուս զիւցազնական ճիգերը մեծ պետութիւններու սիրտը շարժեցին վերջապէս, եւ ասոնք ազատութիւն տւին նահատակ կղզիին: Երանի՛ թէ ազնիւ հայ ազգին համար ալ ներշնչին արդարութեան եւ կարեկցութեան նոյն ոգիէն եւ անոր ալ ապահովեն այն խաղաղութիւնն ու ազատութիւնը, որոնց կը տենչայ ինքը այնքան իրաւամբ:

Հանձնէք հաւատալ, Պարոն, մեր կատարեալ համակրութեամբ հայ ազգին համար եւ ընդունիլ իմ ամէն նաքարձք ակնածութեանս հաւաստիքը:

ԼԻՄՊՐԻՏԻՍ

Դեր-Նախագահ

Կրէտական Եղբայրութեան
Եգիպտոսի

* *

Կրէտէի ազատման առթիւ ուրախութեան տօներ տեղի ունեցած են նաեւ Կահիրէի մէջ, յունւար 7-ին: Այդ օրը Յունական Ակումքին մէջ կատարւած շքեղ նախաձեռն ատեն, տեղին մեր ընկերները հետեւեալ նամակն ուղղած են Ակումքին նախագահի պ. Ա. Սինաղինոյին.

Պարոն Նախագահ,

Հ. Յ. Դաշնակցութեան Կահիրէի Կոմիտէն, թախանձապէս կը խնդրէ ձեզմէ որ հաճիք իր թարգմանը լինել իր կրէտացի եղբայրներուն քով հաղորդելու համար անոնց իր ամէնարուսն եւ ամէնէն անկեղծ շնորհաւորութիւնները իր լուծը խորտակող Կրէտէի ինքնավարութեան, անկախութեան եւ վերականգնանացման առթիւ:

Հ. Յ. Դաշնակցութեան Կոմիտէն կը միանայ ձեր այս իրիկւան գումարումին ամէնուն հետ արտայայտելու իր ջերմաշնորհ իղձերը իր եղբայրներուն բարգաւաճման եւ երջանկութեան համար, եւ կը ձայնակցի բոլոր արտով ձեր ազազակին:

Կեցցէ՛ ազատ եւ անկախ Կրէտէն

Կեցցէ՛ Դաշնակցութիւնը:

Նամակին ընթերցումէն ետք, հէլլէնական ընդհանուր հիւպատոս պ. Դրիպարիս եւ պ. Ա. Սինաղինո իրենց շնորհակալութիւնները յայտնած են մեր ընկերներուն «շնորհակց ուշադրութեան» համար: Պ. Դրիպարիս, ընդհանուր հիւպատոսը, աւելցուցած է նաեւ թէ հէլլէններն ալ իրենց կողմէն երջանկութիւն կը մտղծեն հայ ազգին համար, եւ թէ ինքը կը յուսայ որ հայերը կրէտացիներէն աւելի քիչ զոհողութիւններով, աւելի արդիւնաւէտ վախճանի մը պիտի հասնին:

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԵԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՓՈՔՐԻԿ ԴԱՏԱԽԱՋԸ

Քերեցէք մի քիչ պօլսեցի վատ տիպի գրողին եւ տակից անպատճառ զուրս կը գայ մի ողորմելի սոփեստ, մի graeculus, զուրկ բարոյական հաստատ սկզբունքներից, զուրկ ճշմարտութեան որոշ կրիտերիումից, հլու արբանեակի հզօր մեկենասի, թուլամորթ երկրպագութեան յաջողութեան, միշտ պատրաստ այրելու այն, ինչին խուսկ էր ծխում երէկ...

Այդպիսի ողորմելի սոփեստներից մէկն է եւ պ. Արչակ Զօպանեան, որի հրատարակած «Անահիտ»-ը իր հրապարակախօսական մասում ներկայացնում է մի զարմանալի զանգւած հակասութիւնների, կոպիտ սխալների, զրպարտիչ ակնարկների եւ անհեթեթութիւնների:

Զբաղւել այդ հողմաղաց գրողի բոլոր իմաստակութիւններով մենք ոչ ժամանակ ունենք եւ ո'չ տեղ:

Մենք ցոյց կը տանք միայն նմուշներ՝ յիշելով նախապէս որ հայ յեղափոխական շարժումը համարելով անհրաժեշտ շարունակութիւն Ներսէս պատրիարքի ընդ նստ ուղղութեան եւ Րաֆֆիի քարոզած գաղափարներին, պ. Զօպանեան չի բաւականանում մեր միւս նորագործ հակայեղափոխականների նման՝ յարձակելով միմիայն հայ յեղափոխականների վրայ, այլ ուղղակի անցնում է հին հակայեղափոխականների բանակը եւ «զրուելը երկու ձեռքերի մէջ առնելով ու ծանրորէն, անկեղծօրէն, երկրազածօրէն նկատելով կացութիւնը», վերջին կոտորածների համար պատասխանատուութեան է հրաւիրում սուերենները Ներսէս պատրիարքի եւ Րաֆֆիի, որոնք նրա կարծիքով ճշմարիտ եւ լուրջ ազգասիրութեան դասեր պէտք է առնէին Նուբար փայայից եւ Մերենցիցի:

Ինչքան էլ պ. Զօպանեանը իր այդ դատողութեամբ յիշեցնէր մեզ սոխակի երգեցողութեան յայտնի դատաւորին, չենք կարող սակայն չխոստովանել, որ նրա այդ վարմունքը աւելի հետեւողական է քան այն փոքրողի փիլիսոփայութիւնը, որոնք, իբրեւ նոր փարիսեցիներ, պաշտելով հայ յեղափոխութեան մարգարէներին յիշատակը, քարկոծում են նրա առաքելներին:

Ծիշդ է՝ պ. Զօպանեանի այդ հետեւողականութիւնը չի բղիտում մտքի անշեղ տրամաբանականութիւնից, որ իզուր կը լինէր փնտռել այդ գրականական հողմացոյցի մէջ, այլ հետեւանք է Հէրոստրատական անախառնութեան եւ կատարեալ բացակայութեան այն տարրական զգացմունքի, որ ստիպում է մարդուս զուլա խոնարհել հոգու վեհութեան առջեւ եւ ծունկ չոքել նւիրական չիրիմիների մօտ: Ծիշդ է այդ բոլորը, բայց ճիշդ է եւ այն, որ այսօրայ փարիսեցի փիլիսոփայը դառնալու է վաղը յեղափոխակի Հէրոստրատ՝ այնպէս, ինչպէս ինքը պ. Զօպանեանը, որ օտար հասարակութեան առջեւ հայկական դատի փաստարան ձեւանալով եւ նոյնիսկ «Անահիտ»-ի առաջին տետրում հայ յեղափոխութեան օգտակար հետեւանքները չեղտելով, նոյն «Անահիտ»-ում երկու ամիս անցած խաչակիր արշաւանք է յայտնում ամբողջ հայկական շարժման:

Սակայն դիմենք փաստերին:

Նոյնմբեր ամսուում ենք. «Անահիտ»-ի չուրջը փչում են արեւմտեան հովեր եւ պ. Զօպանեան գրում է.

«Մարտիրոսներուն արիւնը իզուր աղաղակած պիտի չըլլայ, կ'ըսէր Անադօլ Ֆրանս հայերուն, ուժ մը կայ ձեզի հետ, ցրած բայց հզօր, — վեհանձն սրտերուն եւ ազնիւ մտքերուն համակրութիւնը» (Արդարութեան համար թափած արիւնը, շարունակում է իր կողմից պ. Զօպանեան, պարծանք է մեր ժողովրդին, զայն պեղեցիկ ու սրբազան կը կայացանէ աշխարհի առջեւ: Եւ եթէ նիւթական կորուսանիս ահագին է, բարոյական չափ մը ունինք մեծ ու բեղուն: Մոռցած, արհամարհած ազգ մըն էինք. մեր ճիզին ու մեր զրծբախտութեան մեծութեանը չնորհիւ՝ ամբողջ քաղաքակիրթ աշխարհին ծանօթ ժողովուրդ մը դարձանք, ծանօթ ու համակրելի իր կամքովը, յանդգնութեամբը, զոհողութեան ոգովը, յարգելի՝ իր անարդար ապերջանկութեանը համար) . . . «Ես ապահով եմ, կ'ըսէր օր մը Ժօնէս ինծի, որ ձեր դժբախտութիւնը ձեզի օգտակար եղած պիտի ըլլայ, ձեզ չէինք ճանչնար, եւ հիմա կըզբաղինք ձեզմով, մարդկային թատերաբեմին վրայ՝ աւելի մօտ եկաք առաջին կարգին. հիմա տարր մըն էք զոր հաշի պէտք է առնել. ես չեմ ճանչնար մօտէն ձեր ազգը, բայց կը կարծեմ որ ձեր աղէտքները նոյն իսկ ձեր մէջը բարերար փոփոխութիւններ պիտի բերեն, կորովը, հաւատքը, պայքարին սէրը, եղբայրակցական զգացումը պիտի չեղան ձեր մէջ, պիտի ազնւացնեն եւ զօրացնեն ձեզ: Կեանքին օրէնքն է. մարդկութիւնը ցաւով կը յառաջդիմէ»:

Մեծ ատենաբանին խօսքերը կը յիշեմ, շարունակում է պ. Զօպանեան, ոչ միայն իրենց հիմնադրի կերպով բարձր իմաստասիրութեանը համար, այլ մանաւանդ անոր համար որ

չափազանց ճիշդ են եւ խորաթափանց մեզի նկատմամբ. . . Եւ երբեք այնքան անիրաւ եղած պիտի չըլլայինք միմիայն մեր թերութիւնները փնտռելով, որքան այս վայրկեանիս ուր, ուշադիր եւ անկեղծ նայւածքի մը համար, հայ ցեղը, իր ամբողջութեանը մէջ, կը ներկայացնէ տեսիլ մը յուսատու եւ հիացման արժանի»:

Այս բոլորը գրում էր պ. Զօպանեան նոյնմբեր ամսին, բայց անցնում է երկու ամիս, քամին փոխում է, սկսում է փչել ուրիշ կողմից, Նուբար փայայի մեկենասական բարձունքներից, եւ ահա պ. Զօպանեան գեռ եւս չմաշած այն կօշիկները, որոնցով ցնում էր հայ նահատակների դազադի յետեւից, նոյն «Անահիտ»-ում (համար 3րդ) պնդում է, որ հայի թափած արիւնը ոչ միայն չի կարող համարել «պարծանք մեր ժողովրդին», ոչ միայն ընդունակ չէ «սրբազան կացուցանել» նրան, ոչ միայն չի տւել նրան «բարոյական չափ՝ մեծ ու բեղուն», ոչ միայն չի դարձրել նրան «տեսիլ մը յուսատու եւ հիացման արժանի», այլ անպայման վնասակար է եղել նրա համար, ցոյց է տւել, որ հայ ազգը մարտիրոսներից չէ բաղկացած, այլ ոչխարներից, եւ ապացուցել է, որ հայերը «անկախութեան մը արժանի չեն»: Եւ թուղթը տանում է այդ եւ շատ այդպիսի բաներ, եւ այն, որ «Րաֆֆին վնասակար եղած է՝ հայ երիտասարդութեան ուշադրութիւնը դարձնելով Մեծ Հայաստանի վրայ», եւ այն, որ «Սան Սթէֆանօյի դիմումէն յետոյ, Ներսէսի ընթացքը քրէական սխալներու շարք մը եղած է», եւ այն, որ «հայկական յեղափոխութիւնը ըստ ձեռնարկի ու օգտին նկարագրին ունի անտանելի եւ ատելի 61-րդ յօդաւորն. . .»:

Թուղթը տանում է այդ բոլորը եւ պ. Զօպանեան, քաջաբերած դրանից, շարունակում է իր անհուն ստուրթիւնից աւելի եւ աւելի եռանդով ցելս չպարել գէպի վեր, գէպի հայ ամենամեծ հայրենասէրների եւ հերօս-նահատակների սուերենները, առանց նկատելու, որ ցեխը, չհասնելով նպատակին, թափւում է ներքեւ իր ողորմելի գլխին. . .

(Կը շարունակւի)

ԹԻՒՐԿԻՈՅ ԵՈՒՐՋԸ

Միջազգային շրջափոխ կծծիւթիւնը սիրուն կաղանդէք մը ընծայեց Կրէտէին: Հրաշք: Զի թօն եր ու վ (կեցցէ) փառաբանութիւն մը անհրաժեշտ է:

Օսմանեան օժի խարազանին տակ 250 տարի Միսիֆի ժայռը զորցնիւէ ետքը, Միսիֆի կղզին ազատագրեցաւ: Երբ գերի ժողովուրդը մը, դարաւոր յամառ ծեծկութե մը վերջ, հեւհեւ եւ ծարաւ-մարմորն ինքզինք ազատութեան հողին վրայ կը նստէ, աշխարհք ալ ընական հրճանք մը կըզգայ:

Կրէտէն վառողի տակաւ մնէ, ըսած էր դիւանագէտ մը, որ ամենիժիւր կայծերու տակ դրած է: Այդ վախը փարատած է այլեւս, ընկերային ու բարբարոսութեան հրաքի ժայթքում: Ներք պիտի լսեն, եւ լոյսի ու յառաջիմութեան կայծերը պիտի վառվոնն ազատասէր Կրէտէն:

Կրէտէն ինքօրէն հռչակած օրէնքն ընդ թիւքերուն մասը — անոնք որոնք աւելի մասնակցած էին ոճիւրներուն կամ չէին ուզեր կեանքը հողի վրայ մտալ — ոտքերուն փոշին թօթեցին եւ ցրեցան Սալօնիկ, Դոմիոն եւ Փոքր-Ասիոյ նեղ սեւերը. ուր պիտի երթան պատմել իրենց սխալագործութիւնները, եւ վկայ պիտի բերեն քրիստոնէի արիւնով շառալէ եսթաղանին: Փոքր-Ասիոյ քաջաբիւր օսմանցիներուն, որոնց ծոյլ ու մթին անասնականութիւնը կը լսփէ ցաւազին տմարդութիւններու քթօրոշիկական հեքեթները, թուրք բերանուն պիտի վազէ Կրէտէի գաջօր մասնակցութե (հերօս) առասպելները մտիկ ընելով. եւ ինչպէս պիտի խողովոյն նորեկները ապահովցնելով զանոնք թէ Անատոլիոյ մէջ ալ. . . զանազաններու սուրբ սահման չունի:

Հակառակ Դրան լալազին ջանքերուն, Եօրիփոս առօք փառք Կրէտէ փոխադրեցին ուր շքեղ ընդունելութիւն եղաւ եւ որուն համար միւրտերով ու ծաղիկներով յաղթական կամար:

ներ լարեցին, տեղումնանց թնդանթնեքու պայծերը, զարթ խուժանին գիծ օնեքը գողացուցին ծով ու ցամաք: Յունաստանի եկեղեցիներուն մէջ հրաշափառ կ'երգէին այդ պահուն, այնքան շուտ մոռնալով Լարիսայի դաշտերուն բուսականները, զորս չկրցին հալածական ընել քաղմաթիւ պազմանքը ու այնիա-քանայիանքը: Ինչո՞ւ չցնծայ միամիտ Յունաստանը, երբ ուրիշներ իրեն տեղ կը քրտնին. Դոմօքոսի բլուրներուն վրայ, Նիքոլա ցարի անունով պազմա մը աւելի զօրաւոր ըլլալ թերեւս քան հաւքուն մարտկոցները:

Այս ամէնը կ'ըլլայ Համիդի քմահաճոյքին հակառակ: Ղազի Համիդ Երկրորդի բլուրին վրայէն կոռուի վեր առած թող մննէ— եւ իրաւունք ունի— Եւրօպայի երեսին «փուժ պիտի ընեմ» երկիրս, քայց քմահաճոյքս պիտի վարէ Թիւրքիան: Աստուծոնքն ալ պիտի սոսկային այդ յուսահատական հոնդինէն:

Եօգիհօս իշխանը Կրէտէի վրայ ոտք դրաւ մեծմեծ իղծերով ու երիտասարդի իղէալական խանդով: Իր ստանձնած լուծը այնքան թեթեւեղի չէ. վարչական անփորձութիւնը, միջազգային քաշքշուկները տեսակ մը դժգոհ տատամտումի մէջ կը դնեն նոր Տէլէմարը, որուն խարխալ կամքը ու յեղուկ նկարագիրը պէտքը կըզգան կեանքի ելելէնքերուն մէջ չարքաշիկ ու ժամանակի արօրին տակ ակօսւած պատուոն ծակտի մը կամ Մէնտօրի մը, որպէսզի յաջողի Կրէտէի կշտին վրայ փեռելու սպին անհետացնել: Իր նոր պաշտօնը, թէեւ նստուկ, եւ առերեւոյթ խաղաղ, քայց աւելի փշոտ է եւ սրտմաշ, քան այն խորհրդաւոր տիրապետ ծովակալի դերը ուր յունական քնստ ու անգէն մարտանաւերը Դօն Բիշօտի մենամարտը մը-դեցին Սալօնիկի ծոցի ջաղացքներուն ու ... արշիպէղագօսի հովերուն դէմ:

Առ այժմ իշխանը կը գտնուի Դէքարտի մէջ օտիկ տարակուսանքին առջեւ: Պէտք է ժողովրդի դարաւոր ցանկութեան ու ժամանակի պահանջներուն համապատասխան խոհանք ու բարեացակամ սահմանադրութիւն մը տալ երկրին, առանց նորագատ կղզիին մէջ քաղաքային պառակտումներու առիթ տալու: Եշուկներ կան թէ արտաքին էնթրիկներ կը փոշածն վրդովել կղզիին խաղաղացման գործը. Անգլիոյ կը վերադրեն նենգ դեր մը. իբր թէ Զուգեր գատուել կղզիէն, ուր կ'երեւի իր դժբախտ զինուորներու սուգը կ'ուզէ պահել յախուեան. քայց հերիք չէ՞ միջթօրիայի արծանը դնել հոն, որ Նիօքէի պէս իր գինուրները լայ... Վերի ենթադրութիւնը հաւանական չ'երեւար, քանի որ թագուին ինքը ծեռագիր նամակով շնորհակտեց Եօգիհօսը եւ մաղթեց որ կրէտացիները վայելեն կեանքի, պատուի և պահովութիւն եւ այլն:

Այս ամէն ասուկանքէն դուրս իշխանը կը պատրաստուի կղզիին համար կազմական եւ վարչական սահմանադրութիւնը մը ստեղծել: Կազմած է արդէն վեց հոգիէ բաղկացած յանձնախումբ մը (երկուքը միւսիւման), որպէսզի սահմանադրութիւն մը մշակեն որ, ետքը, պիտի ներարկուի առժամանակեայ ազգային ժողովին օրինական վաւերացման: Ազգային ժողովը պիտի կազմի 132 երեսփոխաններէ, 30-ը մասնաշախարհ: Մասնաշախարհներուն մէկ յօդուածը պիտի ծանշայ սուլթանի անուանական գերիշխանութիւնը կղզիին վրայ:

Գալով կղզիին ոտին ընակիշներուն սկսած են հաշտ ապրիւ միւսիւմանները շուտով ընդելացան նոր միջավայրին, եւ կղզիին քարգաւաճման համար ծեռք կուտան յոյներուն: Գաղթող թիւրքերը սիրով կ'ուզեն վերադառնալ իրենց հին երդիրը: Ապագան պիտի ցցնէ կամակոր միւսիւմաններուն որ մարդկային ազատութիւնը, բարօրութիւնը սուլթաններու ու մօլաններու տիրութեան տակ միեւնոյն հողին վրայ կ'ապրին ու կը մեռնին իրենց յոյն հայրենակիցներու հետ, այլուս իրենց աչքը չի դառնար դէպի մօսփօր ուր արշալոյսը ամէն առտու արիւնի շապիկով մը կը քանայ արեւելքը: Աստուած ալ պիտի զարմանայ այն ատեն որ իրաւ «իջ ստեղծածները քարի են»:

ՄԱԿԷՂՈՍԻՆ. — Թիւրքիան հասած տանձի պէս կը թափօփի: Տեղն է ըսել «հայտան կէլէն հոյա կիտէր» (քամին քերածը քամին կը տանի):

Ո՞ր գերի ժողովուրդ, միւսիւման ու քրիստոնեայ, դժգոհութեան ու ատելութեան զգացումով չէ տողորւած թիւրք ռէ-ժիմի դէմ: Հոս է որ քաղաքակիրթ աշխարհի անզգայութիւնը ու ուրիշներուն կեղծերես լրբութիւնը մատ խածցնել կուտան: Հայերը խոզվարարներ են, օտարի գործիքներ են. ահա ինչ որ կը լսէր հաշան թերթերէ որոնց համար ծնարարութիւնը, սուլթանի ոսկիներուն վրայ կը լուսապսակէր:

Տեսնւած էր երբքս այնքան անբան, տգէտ ու խենչէ կառավարութիւն մը, որ իր երկրին փուլգումին առջեւ այնքան տխմար անասնամտութեան հասած ըլլայ:

Փօն Կէր Գօլց փաշան, որ Թիւրքիան իր սրտին պէս կը ծանշայ, անխախտ դաւանքով մը կը յարէ թէ «Թիւրքիան քարեւաւել անհար է. թիւրքերը կուրի ու հարստահարութիւնով տուրք հաւքել միայն գիտեն. ինչ որ քաղաքակրթիչ ու ազնւացուցիչ է չեն ընդունիր»:

Բայց այս բոլոր խրատները, շարագուժութիւնները ջրի ծայն կուզան Դրան ականջին: «Ըլլալիքը պիտի ըլլայ», չէ՞ որ առանց ատոր մարգարէին հաւատքը փուժ է ինչպէս նաեւ ... համիւմանութեան փայփայիկ տեսիլը:

Կրէտէն ետքը, յոյսի աղօտ շողակաթ մը կըստաւել օսմաննան մոայլ աշխարհին վրայ, քայց դժբախտաբար յոյսի երազը շատ արագանցիկ է խալիֆայի երկրին մէջ: Կրէտէի անշատուժ կարծես աւելի բորբոքեց իսլամական կատաղը ու մոլեռանդութիւնը. քրիստոնէաւէնք քաղաքականութեան փրկաւէտութեան զարգացող կ'ուժեւորի նորէն. եւ Մակէղօսիան կը թւի ասպարէզ ըլլալ որուն վրայ դարձած է Երկրորդ մոլեգին ուշադրութիւնը եւ շարագուշակ մտահոգութիւնները:

Մակէղօսիան, քաղաքական աշխարհին մէջ մօտալուտ ըսպառնացող եւ միջազգային խաղաղութիւնը ցնցող ահաւոր տագնապ մը կը նկատուի: Աւտօրիա կը ծգնի այդ հրդեհին առջեւը աննեւ խղիւղ ազատային շարժումը, որուն դերը երբեմն ազատութեան տիրութեան Մէթէրնիքը այնքան լեւնցիօրէն կը կատարէր: Ռուսիա աչք կը ծգէ շարքերու գահուն, ծախով խարոյկ կը պատրաստէ որուն վրայ ողջակէզ պիտի ընէ, թերեւս, նենգ սուլթանը որ ցարեքու շուքն աներեսօրէն կը գատուի:

Սօֆիայի թիւրք գործակալը Նէճիք Մէլամէ, իր պետութեան յղած տեղեկագրին մէջ քացորոշապէս կը շեշտէր Բուլղարիոյ թշնամական դիտումները Թիւրքիոյ հանդէպ եւ մօտիկ վտանգի մը անխուսափելութիւնը: Թիւրքիա ալ արդէն մեծ պատրաստութիւն կը տեսնէ բուլղար սահմանագլխին վրայ: Եթէ դրսէն մեծ միջամտութիւն մը չըլլայ, գարնան կըստաւել թրքաբուլղար պատերազմի մը որուն ելքը թիւրքերը իրենց ալ չեն կրնար նախատեսել, որովհետեւ իրենց դէմ պիտի գլուխ կազմ ու մարզ քանակ մը որ յունական խուճապ նահանջները պիտի շունհնայ:

Անգլիացի նշանաւոր հրապարակագիր մը, Ուլիքմ Միլլըր, նոր գործի մը մէջ հաւատ կը յայտնէ թէ Թիւրքերը մօտ ապագայի մը մէջ պիտի արտաքին Եւրօպայէն, որովհետեւ մակէղօսական խնդիրը ու եւ վայրկեան Եւրօպայի մէջ մեծ իրարանցում կ'ընայ առաջ քերել եւ արեւելեան խնդիրը վերջնապէս լուծել:

Սուլթանը կը յուսայ թէ իր գահը անսասան պիտի մնայ, որքան ատեն իր հպատակները իրաջ բզբտեն: Մակէղօսիոյ մէջ ալ շեքմ հաւատք ունի թէ քալքաննան տէրութիւններու անհամայնութիւնները, որոնց համար կարելի է ըսել թէ «իրարու զայլ» են, պիտի վիժեցնեն Մակէղօսիոյ ապստամբութիւնը: Սուլթանի փնիկեան հաւատքը որուն տակը պարապ վրան քան չկայ միշտ ի հիմա... յետադարձօրէն նպատակած է երկրին օրհասականութեանը:

Դժարութիւնը հաշտեցնելն է Բալքանի «միշտ» պետութիւններուն վիթխարի փառասիրութիւնները:

Մակէղօսիոյ մէջ մօտալուտ զօրաւոր ապստամբութեան մը վախը միջազգային մտահոգութիւն մը կը դառնայ, ըսինք: Մակէղօսական կոմիտէներն ալ ժիր գործունէութիւն մը կը ցցեն շրջաբերականներով, ծրագրերով...

Սթրան Ժա կոմիտէն պետութիւններուն ուղղած է շրջաբերական մը որուն մէջ իրենց հարստահար ժողովրդին թշուաղութեան վրայ անոնց ուշադրութիւնը հրաւիրելով մատնանիշ կ'ընէ Թիւրքիոյ պատրաստութիւնները եւ Մակէղօսիան ալ հայաստան մը ընկելու արենային դիտաւորութիւնը:

Մակէղօսիոյ Գերագոյն Կոմիտէն ալ աւելի ինքնավարութեան ձգտող, իր «Թէֆօրմ» թերթին մէջ Մակէղօսիան հանդարտցնելու համար քարենդորդումներու նոր ծրագիր մը առաջարկած է: Այդ ծրագիրը Թիւրքիայէն անշատուելու սկզբունքը դէն ձգած է, քայց խաղաղ ու ապահով ապրելու համար վարչային ինքնօրինութեան մը պահանջը դնելով սուլթանի հովանաւորութեան ներքեւ:

Մակէղօսացիներուն ծրագիրը շնորհունելի քան չէ եւ ոչ ալ ծայրայեղ այնպիսի աշխարհի մը մէջ ուր մարդ քարոյապէս ու Նիւթապէս երաշխաւորութեան ոչ մի յուսանելի ունի:

Միշտեւ Թիւրքիան ելլէ իր արիւնտու ծախմախուտէն, ուր մոլեռանդ ունեցները կը սասանեցնեն ողջմտութեան ծայրները, քանը քանէն անցած է արդէն, եւ ինչ որ զարմանալի է, Բ. Դրան տխմարութիւնն է որ իր խլուրդի թաւալումներով, դեռ այն համոզմունքը ունի թէ յառաջդիմութեան, արդարութեան ըմբռնումը, սուլթաններու ու վալիներու ըմբռնումէն դուրս, ու միւսիւման անօրէնութեան դէմ բողոքելու եւ ունեային ժպիր յանցանք մըն է: Բնաւ չ'ուզեր հաշուիլ իրերու անողորմութեան հետ յամառ էշերուն պէս, որ ցել ծամ-

քուն վրայ փռած, որքան ալ միտես չեն շարժիր արգիլելով որ ուրիշներն ալ չանցնին:

Աւստրիա եւ Ռուսիա ուշիուելով Բալքաններու մէջ անց- ուղարձին կը հետեւին: Սեւ ծովի ռուս տորմիդ մը պամպատի րաստ շարժուն դրութեան մը մէջ դուելու վրայ է, իբր թէ զարման Մակէդոնիոյ խոտլութիւնները նախատեսելով: Բուլղա- րիան սուսփուս, պատրաստ, իր քայլը դեռ չի փոխտեր, մինչեւ ցարի վերին հրամանը չգայ: Մուրավիէի Դրան յայտարարա- րած է թէ ինչաւ քաղաքներն տէրութիւններուն թոյլ պիտի չտրուի ու եւ է միջամտութեան: Մի գուցէ զինադաշնութեան պետութիւններուն լիազօրութիւն տայ նաեւ իրենց ժողովուրդ- ները ուզածնուն պէս զգելու համար... Մուլթանին ծէնէթայս- ին հեշտանք մը պատճառելու խորին ներշնչմամբ: Որքան քախտաւոր աստղի ներքեւ ծնած է սա չամիլը:

Պօլսի թիւրք թերթերը ծշմարիտ միւսլիմի մը քարեպաշտ հաւատքով կը դանդաղեն թէ «Մակէդոնիան առասպել մըն է», որպէս թէ Թիւրքիան ալ... մղձաւանջ մը Եւլլար:

Տ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

— Temps-ին հետագրում են Պօլսից, թէ Նայելով տրեքին, ստիկանութիւնը քայքայ է մի դաւադրութիւն սուլթանի կեանքի դէմ:

— Նոյն լրագրին հետագրում են Պօլսից, թէ օսմանեան կա- ումարութիւնը վճռել է 34,000-ից 44,000-ի հասցնել իր զօրքերի թիւը Մակէդոնիայում, չնայելով բուլղար կառավարութեան խա- ղադատել յայտարարութիւններին:

— Բարձրագոյն Դուռը սկսում է դժգոհութիւն արտայայտել Անգլիայի քննած դիրքի համար Մուլթանի նաւթումից յետոյ: Մուլթանը վրդոված է, որ Անգլիան Մուլթանի հարցը վճռելիս, քանի տեղ չէ դրել իր գերբնիւնութիւնը:

— Պօլսից հետագրում են «Frankfurter Zeitung»-ին թէ Նախ- կին մեծ վէճեր Սայֆէդին փաշայի երկու որդիքը, որոնցից մէկը սուլթանի թիկնապաշտ է, իսկ միւսը մի քարձր պաշ- տօնեայ, վերջին օրերս փախել են արտասահման մի Քրան- սիական շոգնաւով:

Պալատում վախճնում են, որ նրանք յարին «Երիտա- սարդ Թիւրքերին»:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ Ստացած է՝

Սուլթանյէն Մ. Արդնեան 20 ֆրանք, — Ա. Էն 10 ֆրանք, — Մ. քաղաքէն ռուս համակրողէ մը 100 հոսքի, — Անճուէր խումբ 18 շիլլին:

ՎԻՃԱՊԻ «ՄԱՏ» ԿՈՄԻՏԵՆ՝

Անանուն, Կայծակ 20-ական դասեկան, Համիդիէ գունդ խ. 140, Կամաւոր 40, Տարօնից 10, Փէնըլժոն 20, Ետրօնի վեհ. սուլթանի 120, Երկաթագործ Երւանդ 5: Դուլմար 375 դասեկան:

ՈՍԿԵՅԱՆՔԻ ԿՈՄԻՏԵՆ՝

ԲԼՈՒՐ քաղաքէն 140 դասեկան: Պարապետ 7 դասեկան ողջ, Օշարակ (չորս ամսավճար) 20, Ռուբինեանց խ. 16, 75, Անուշաւան 20, Արշալիր խ.-ի ամրդամներէն Պարոյր, Ժով, Լուսին, Ոսկի 4-ական, Վառդ 5, Ճանկիւլեան խ.-ի տէրօրէն 5, Արիւն խ. 5: Դուլմար 94 դասեկան 75:

ՊՂՆԱՎԱՐԱՐ. — Նրբամիտ 54 դասեկան 25 (10 փարա), Ան- կնդ 35, Գեղամ 29, 25, Յորին 28, Զմէն 26, 25, Բ. Պ. Մ. 23, 50, Խ. Իֆ. 17, 50, Բաջալերող 10, 50, Բ. Թ. 8, 75, Զիթե- նի 21, Սուր 21, Ետանդուն 7, Եոգի 3, 50, Մեքենայ 3, 50 Դուլմար 289 դասեկան (փուտ):

ԱՅԻՆԱՎԱՐ. — Նիզակ 140 դասեկան, Առիւծ 105, Ժիրայր 70, Արթուր 36 դ. 30 փարա, Պարոյր 35, Վարդ 35, Վրէժ 140, Վահագն 210, Թուր 10, Զուր 30: Դուլմար 811 դասեկան 40 30 փարա (փուտ):

ՎՐԻՊԱԿ. — 1898 թ. 11-ի ցուցակին Արշալիր, Ժով ուղղել Արշալիր խ.-էն Ժով, եւ այլն:

ՆԱԻԱՅԱՆԳՍՏԻ ԿՈՄԻՏԵՆ՝

ԴՄՇՏ քաղաք. — 1 մարտ — 30 դեկտեմբեր. Ալքսան 30 հոսք- լի, Թիւրք, Վարդապետ 20-ական, Սիրելի 15, Մանուշարեան, Գնունի, Գոսակ, Բարեգրիչ, Վրէժ, Սոխակ, Եղիա, Հայրիկ, Թէրզեան, Ստեփանեան, Ս. Սէմէրճեան, Նազարեան, Զաքէոս,

Դուրգէն, Փափագ, Վարդէնցիք Աղաճան, Ոսկերիչ համբերա- տար 10-ական, Մուրատ, Արեգակ, Վիթիար 5-ական, Ժամկոչ 4, Ազիզ 3, Ազատասէր, Զուր 2-ական, Թէմուրջեան, Միքայէլ, Եարար, Ալէքսանեան, Ազատեան, Յորիկ մէկ-մէկ հոսքի, Համ- քարձումեան 50 հոսքի: — ԼՈՒԾՔ քղ.-ից Կակուղ փուշից չորս ամսական 40 հոսքի: Դուլմար 337 հոսքի 50 հոսքի:

ԱՂ, քղ.-ից Դուլմար 50 հոսքի, Առողջութիւն 25, Սէր, Սնկատող 20-ական, Վաճառական 15, Զիւտը, Երկաթով, Դրա- գիւր, Հաւատք, Անտարան 10-ական, Դաւն, Աստածապաշտ, Յոյս 5-ական, Վարդուգ, Ը. Սանդուխտ 3-ական, Զորգոր, 2, Հայ- կանուշ 1: Դուլմար 204 հոսքի:

ՍԵՆՃՈՒՐ-ի հանգանակութիւնէն Արտաշէս 10 հոսքի, Զա- տիկ 5, Բ. Պ. 50, Գրիգոր 25:

ՎԼՈՐԻԿ-ի հանգանակութիւնէն Ա. 25 հոսքի, Զ. 2, Բ. 8, Ա. Թ., Մեսրոպ 10-ական, Բ. 8, Արարհամ, Մ. Օ. 5- ական: — Աւարայրի հանգանակութիւնէն Դերենիկ 25, Գրիգոր, Հայկ 10-ական, Պետոյի խումբ 6, Մեղու 2: — ԱԹՈՒՇ-ից 3, Ժաղիկ 2: — ԶՈՐԱՓՈՐ-ի ամսավճարներէն 58 հոսքի 76 հոսքի: ՆՐ 72-ից 10: Դուլմար 296 հոսքի 76 հոսքի:

ՆԵՂՈՒՑ քղ.-ից — Արտաշէս 21 հոսքի, Սիմաւոն 20, Զուկ 12, Բարեկէն 11, Սաթիւնիկ, Տէօվէթ, Վարդան, Վարդ 10-ական, Ժաղիկ, Փոքր Արթիւր, Արամ, Յովհաննէս, Խաչիկ, Պատկեր, Ս. Դ., Աւօ 5-ական, Եփրատ 3, 50, Համաս, Արգուման, Յովսէփ Գեղեցիկ, Պողոսիկան 3-ական: Դուլմար 159 հոսքի 50 հոսքի: ՀԱՄԱԳՈՒՄԱՐ 997 հոսքի 76 հոսքի:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆ՝

ՄԱԿԻԹՈՒՆ Կոմիտէն Արեւելեան խումբ (յունիս եւ յու- լիս) 39 լիւ, Բարեկէն-Սիւնի խ. (յունիս եւ յուլիս) 28, Ա- րեւելեան խ. (օգ. եւ սեպտ.) 47 լիւ 25 սանթիմ, Թորգոմեան խ. (յուն. եւ յուլ.) 18, 50: ՀԱՍՔՕՎՈ-ի Փուշիկ խ. 7, 50, Հայ- ունեաց «Շաքէ» Ընկերութիւնէն (ապրիլ եւ յուն.) 60, Առիւծ (Ժ.) (յուն. եւ յուլ.) 4, Աքէլ ոսկերիչ 2, Հայկակ 6, Եղբարք (Տ.) 10, Դուլմար 222 լիւ 25 սանթիմ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՀԻՐԷԻ (Եգիպտոս) դաշնակցական Կոմիտէին կնիքը եւ նամակի պաշտօնական թղթեր այլեւայլ գրութիւն- ներու հետ յունւար 18/30-ին գողցած են ընկերող մը սենեակէն:

Հասարակութիւնը եւ մեր ընկերները կը հրաւիրին այդ կնիքը կրող որ եւ թուղթ վաւերական չնկա- տել այսուհետեւ:

Մինչեւ ցնոր տնօրինութիւն, Գահիրէի Կոմիտէին կող- մէն բղած ամէն գրութիւն պիտի կրէ անդամներու ստորագրութիւնը եւ Ալէքսանդրիոյ Կոմիտէին կնիքը:

* * *

Յունւարի ներկայ համարէն սկսած՝ մասնաւորներու հասցեով թերթ չպիտի խրկուի այն վայրերը, ուր դաշ- նակցական մարմիններ գոյութիւն ունին:

Իսկ լուր անոնք, որ առաջան պէս ներկայ համարս ալ պիտի ստանան, կը հրաւիրին փութով հաղորդել «Դրօշակ»-ի խմբագրութեան իրենց մանրամասն հաս- ցէն, ընթեռնել կերպով գրած:

Այս հրաւերին չպատասխանողներուն պիտի հարկա- գրէինք ԹԵՐԹ ԽՐԿԵԼԸ ԴԱԴԻՆԵՑՆԵԼ, հասցէն անբա- ւարար նկատելով:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՐՈ

Խմբագրութեան դիմել հետեւալ հասցեով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)